Պրոֆ. Հ. Կ. Մաղաքյան




# Առաջավոր ստախանովականների նվաճումները 1939 թվի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում

63
Մ-13

Հայպետհրատ
Երևան 1940

04 AUG 2010

Բիոլոգիական գիտությունների դոկտոր
պրոֆ. Հ. Կ. ՄԱՂԱՔՅԱՆ

63
Մ-13

# ԱՌԱՋԱՎՈՐ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ 1939 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

21 JUN 2013

Այս հոդվածը կազմված է 1939 թվի Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի նյութերն անձամբ ուսումնասիրելու և հատկապես Ցուցահանդեսի համար հրատարակված գրականությունն ուսումնասիրելու հիման վրա:

ՊՐՈՖ. ՄԱՂԱՔՅԱՆ

ԱՆՎ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Пуб. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
ԱՄ. Ա. Մյասնիկյան
им. А. Мясникяна
722
41

Доктор биологических наук проф. А. К. МАГАКЬЯН

Достижения передовиков стахановцев на Всесоюзной Сельско-Хозяйственной Выставке 1939 г.

Армгиз, Ереван, 1940

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի նպատակներն ու խնդիրները ձևակերպված են այն որենքում, վոր ընդունել է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը 1938 թվի օգոստոսի 21-ին: Ցուցահանդեսը պետք է «արտացոլի սոցիալիստական գյուղատնտեսության մեծ նվաճումները ԽՍՀՄ-ում», արտացոլի «Խորհրդային Միության հանրապետությունների, յերկրամասերի և մարզերի գյուղատնտեսության հզորությունն ու հարստությունն իր ամբողջ բազմազանությամբ...»

1939 թ. Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսը՝ աշխարհում միակ սոցիալիստական յերկրագործության հաղթանակների համաժողովրդական ստուգատեսը՝ «արմատապես տարբերվում է յերբևիցե գոյություն ունեցած բոլոր գյուղատնտեսական ցուցահանդեսներից վոչ միայն նրանով, վոր աշխարհում առաջին անգամ նրա մասնակցողները բացառապես կոլեկտիվ, արտելային տնտեսություններն ու պետական խորհրդային տնտեսություններն են, այլև հենց Ցուցահանդեսին մասնակցողների ընտրության կարգով, հենց այն սկզբունքով, վոր կազմում է այդ ընտրության հիմքը»: (1).

«Ցուցահանդեսին մասնակցում են միայն այնպիսի սոցիալիստական տնտեսությունները, մեր գյուղատնտեսության միայն այն առաջավորները, վորոնք կատարել են գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության, անասունների մթերատվության և մեքենաների արտադրողականության վերաբերմամբ սահմանված ցուցանիշները: Ցուցանիշները չափազանց մանրամասնորեն դիֆերենցված են ըստ բույսերի կուլտուրաների, ըստ անասունների տեսակների ու ցեղերի, ըստ մեքենաների տիպերի ու մարկաների, ըստ ԽՍՀՄ-ի տարբեր կլիմայական ու բնական զոնաների: Կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների ամբողջ մասսան, յուրաքանչյուր կոլտնտեսական, ՄՏԿ-ի և խորհտնտեսության բանվոր, կատարելով այդ ցուցանիշները, կապահովեն ստալինյան յերրորդ հնգամյակի գյուղատնտեսության առաջադրանքների վոչ միայն կատարումը, այլև գերակատարումը»: (1).

Ցուցահանդեսին մասնակցելու համար ջոկված են լավագույններից լավագույն խորհտնտեսությունները, ՄՏԿ-ները, կոլտնտեսությունները: Ցուցահանդեսում նրանք վոչ միայն ցույց տվին իրենց աշխատանքի հանրագումարները, այլև պատմեցին իրենց աշխատանքի մեթոդների մասին, այն մասին, թե իրենք ինչպես են հասել բարձր բերքատվության, կենդանիների բարձր մթերատվության, աշխատանքի բարձր արտադրողականության:

«Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսը,— ասել է

ընկ. Վ. Մ. Մոլոտովը ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում իր զեկուցման մեջ,—մի ամբողջ ծրագիր է տալիս գյուղատնտեսության վերելքի համար: Այն կծառայի գյուղատնտեսության առաջավորների համամիութենական ժողովրդականացման գործին, նրանց աշխատանքի լավագույն օրինակների ժողովրդականացման և տարածման գործին: Այդ Ցուցահանդեսը պետք է մրցություն առաջացնի կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների միջև, շրջանների, մարզերի և հանրապետությունների միջև: Նա կարող է և պետք է խոշոր դեր խաղա գյուղատնտեսության հետագա վերելքի կազմակերպման և յերրորդ հնգամյակի առաջադրանքների կատարման գործում»: (1).

Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսը մեծագույնն է աշխարհում: 136 հեկտար տերիտորիայի վրա կառուցված են մոտ 250 մեծ ու փոքր շենքեր: Այստեղ կան մասնագիտացված ճյուղային 32 պավիլիոններ՝ «Հացահատիկ», «Մեխանիզացիա», «Անասնապահություն», «Բամբակ» և այլն: Այդ պավիլիոններում ցուցադրված են սոցիալիստական յերկրագործության մեքենայացման մեծագույն հաջողությունները, հացահատիկային, անասնապահության պրոբլեմների լուծման համար, հողի վերափոխման համար, բույսերի և կենդանիների բնույթի վերափոխման ու բարելավման համար մղվող պայքարի հանրագումարները, Միության հումքային անկախության համար մղվող պայքարում ձեռք բերված հաղթանակները:

Ցուցահանդեսի 20 խոշորագույն կառուցումները միութենական հանրապետությունների և ՌՍՖՍՀ յերկրների ու մարզերի պավիլիոններն են: Այդ պավիլիոններում արտացոլված են ամբողջ յերկրամասերի ու հանրապետությունների ծաղկումը, կոլտնտեսային աշխատանքի պտուղները, կոլտնտեսականների ունևորության արագ աճը, առատության աճը:

Ցանքերն ու տունկերը, վորոնք զբաղվում են մոտավորապես 20 հեկտար, մինյատյուր չափով ներկայացնում են ամբողջ ՍՍՀՄ-ի գյուղատնտեսությունը: Հենց միայն հացահատիկի հողամասում ցանված է ավելի քան 20 կուլտուրա՝ մոտավորապես 600 սորտ: Հատուկ մի այգում տնկված են պտղատու և հատապտուղ կուլտուրաների մոտավորապես 600 սորտեր, այդ թվում նաև միչուրինյան պտղատու սորտերի ամենահարուստ կոլեկցիան: 22 կուլտուրա՝ 139 սորտ ցանված է տեխնիկական և հարավային ջերմասեր կուլտուրաների հողամասի վրա: Առանձին տեղավորված են արմատա-պալարապտուղների և բանջարեղենների ցանքերը: Բացօթյա հողամասերում ցուցադրված է ընդամենը 260 կուլտուրա՝ 3 հազար սորտից ավելի: Այդ ցանքերով և տունկերով ցույց է տրված ՍՍՀՄ-ի գյուղատնտեսական աշխարհագրությունը, մեր գյուղատնտեսական հսկայական հարստությունները:

Ցուցահանդեսում լայնորեն ցույց են տրված նաև սոցիալիստական անասնապահության և թռչնաբուծության հսկայական հարստությունները՝ ձիեր, կովեր, մատակներ, վոչխարներ, խոզեր, ճագարներ, հավեր և այլն: Նրանցից շատերը կաթնատվության տեսակետից համաշխարհային չեմպիոններ և համամիութենական ռեկորդիստների կոչման հավակնորդներ են. կան մի փունջ բրդի խուզ ունեցող խոյեր, ռեկորդային ծանրաքաշ ձիեր, վարգուններ և այլն:



«Ցուցահանդեսի բոլոր էքսպոնատները սոցիալիստական յերկրագործության և անասնապահության բարձր կուլտուրայի ուշագրավ խտացումներն են: Դրանք գիտության և պրակտիկայի մարդկանց կազմակերպված մեծ կոլեկտիվների աշխատանքի պտուղներն են: Դրա հետ միասին՝ Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսը վոչ միայն սոցիալիստական գյուղատնտեսության հաղթահանդեսն է, այլև միաժամանակ խորհրդային ճարտարապետության, խորհրդային նկարչության և քանդակագործության հաղթանակն է»: (1). Մեր յերկրի յերկու հազար լավագույն արվեստագետներն ու ճարտարապետները քիչ աշխատանք չեն թափել այդ բանի համար: Ցուցահանդեսի այնպիսի կառուցումները, ինչպիսիք են «Մեխանիզացիա» վիթխարի պավիլիոնը, «Ուկրաինա» պավիլիոնը, «Գլխավոր պավիլիոնը», Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի պավիլիոնները և ուրիշները, կանգնած են խորհրդային ճարտարապետության ամենահիանալի արտադրանքների շարքում: Յուրաքանչյուր պավիլիոն, յուրաքանչյուր հրապարակ փայլում է գեղարվեստի խոշոր ստեղծագործություններով, խորհրդային լավագույն արվեստագետների ու վարպետների մի ամբողջ շարք ուշագրավ նկարներով ու քանդակներով:

Այս ամենը պարզ ցույց է տալիս ցուցահանդեսի հոյակապությունը: Հաշված է, վոր պավիլիոններում ցուցադրման ընդհանուր տարածությունը 50 հազար քառ. մետրից անցնում է: Էքսպոնատային ցանքերի ու տունկերի ընդհանուր տարածությունը հասնում է մինչև 200 հազար քառ. մետրի: Իրավացի յե Ցուցահանդեսի դիրեկտոր ակադ. Ցիցինը, յերբ ասում է. «Եթե Ցուցահանդեսում անցկացնես որական 6 ժամ, մի տարում էլ չի հաջողվի այն ուսումնասիրել»: (1). Իհարկե առավել ևս դժվարին խնդիր է մեկ կամ նույնիսկ մի քանի հոդվածներում շարադրել Ցուցահանդեսի հիմնական ցուցանիշները և սոցիալիստական գյուղատնտեսության առաջավորների նվաճումները.

Այս աշխատության մեջ յես, Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի նյութերի հիման վրա, ուզում եմ փորձել մի հանրագումարի բերել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման բնագավառում և սոցիալիստական անասնապահության կերի բազայի ամրացման ու զարգացման բնագավառում գյուղատնտեսության առաջավոր-ստախանովականների հիմնական նվաճումներն ու ցուցանիշները: Յես փորձելու յեմ ցույց տալ այն հսկա աշխատանքը, վոր մեր անծայրածիր հայրենիքի բոլոր անկյուններում կատարվում է հողի բերքատվության բարձրացման, ագրոտեխնիկայի լավացման ուղղությամբ, սոցիալիստական անասնապահությունն առատ ու բարձրորակ կերով ապահովելու գործում:

# ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀՆԳԱՄՅԱԿՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

*Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի ուշագրավ պավիլիոններից մեկն է հանդիսանում Գլխավոր պավիլիոնը, վորը ցուցադրում է սոցիալիզմի յերկրի մեծագույն հաղթանակները հասարակական ու պետական կառուցվածքի բնագավառում, տնտեսության, կուլտուրայի, կենցաղի բնագավառում: Հանդիսանալով ցուցահանդեսի ներածական պավիլիոնը՝ նա վառ գեղարվեստական կերպարներում մարմնացած ընդհանուր հանրագումարներով ցույց է տալիս, թե ինչպես բոլշևիկները ցարական հին խղճուկ գյուղը դարձրին կոլտնտեսային ծաղկող գյուղ, թե մեր յերկրում գյուղատնտեսությունը սոցիալիստական վերակառուցման յենթարկվելու հետևանքով ինչպիսի հսկայական հաջողությունների յե հասել:*

*Ստալինյան հնգամյակների տարիներում խորհրդային գյուղի պատմությունը բնորոշվում է մի կողմից՝ սոցիալիստական գյուղատնտեսության աճումով ու ամրացումով և, մյուս կողմից՝ մենատնտես մասնավոր սեփականատիրական գյուղացիական տնտեսության վերացումով:*

*Կոլտնտեսություններում հացահատիկային կուլտուրաների ցանքի տարածությունը* 1933 *թ. յեղած* 75 *միլիոն հեկտարից աճելով՝* 1938 *թվին հասել է մինչև* 92 *միլիոն հեկտարի, մինչդեռ մենատնտեսների հացահատիկային տարածությունն այդ նույն ժամանակաշրջանում* 15,7 *միլ. հեկտարից իջել է մինչև* 600 *հազար հեկտարի, այսինքն՝ հավասար է հացահատիկների ցանքի ամբողջ տարածության* 0,6%*-ին: Կոլտնտեսություններում համախմբված են* 18.800 *հազար գյուղացիական տնտեսություններ, վոր կազմում է նրանց ամբողջ քանակի* 93,5%*-ը*

(չհաշված ձկնորսական և արհեստագործական կոլտնտեսությունները) (2): Մեծագույն հեղաշրջում է կատարվել գյուղացիության հոգեբանության մեջ, վորն այժմ կոլտնտեսությունից դուրս կյանքն աներևակայելի յե համարում:

Կոլտնտեսային կարգերը վերջնականապես ամրացել են: Տընտեսության սոցիալիստական սիստեմը հանդիսանում է մեր յերկրագործության միակ ձևը: Աճել են բոլոր կուլտուրաների ցանքի տարածությունները, մանավանդ կերի, տեխնիկական և բանջարանոցա-բախչաների կուլտուրաներինը: Մեր յերկրագործությունը դառնում է ավելի վորակյալ և արդյունավետ: Ճիշտ ցանքաշրջանառություններ մտցնելն ուժեղ հիմք է ստանում:

Սոցիալիստական գյուղատնտեսության հիմքը խորհրդային ժամանակակից նոր տեխնիկան է: Յերկրագործությունը նոր տեխնիկայով հագեցված լինելու տեսակետից մեր յերկիրն ամենից ավելի առաջավորն է՝ համեմատելով վորևէ կապիտալիստական յերկրի հետ: Մեզանում, ԽՍՀՄ-ում տարեց-տարի աճում է գյուղատնտեսության էներգո-զինվածությունը: Տրակտորների քանակը 1933 թվին յեղած 210,9 հազարից ավելացել է 1938 թ. մինչև 483,5 հազարի, այդ նույն ժամանակամիջոցում տրակտորային պարկի հզորությունը 3209,2 հազար ձիաուժից հասել է մինչև 9256,2 հազար ձիաուժի: ԽՍՀՄ-ի դաշտերում աշխատող կոմբայնների թիվը 1938 թ. հասել է 153.500-ի, իսկ բեռնատար ավտոմոբիլներինը՝ 195.800-ի: Բացի բոլոր այս մեքենաներից գյուղատնտեսությունն ունի հսկայական քանակությամբ բարդ և կիսաբարդ կալսիչներ, հիանալի գութաններ, փոցխեր և այլն: Գյուղատնտեսական աշխատանքըն ավելի ու ավելի դառնում է ինդուստրիալ աշխատանքի մի այլատեսակը: Աճել է նոր սոցիալիստական ինտելիգենցիա: Գյուղատնտեսության մեջ հաշվում են 1700 հազարից ավելի տրակտորիստներ, կոմբայնավարներ, շոֆերներ և ինդուստրիալ պրոֆեսիաների այլ աշխատողներ: Կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների, խորհտնտեսությունների, ֆերմաների և բրիգադների ղեկավարների ու կազմակերպիչների թիվը 1,3 միլիոնից ավելի յե: Կան 300 հազարից ավելի ագրոնոմներ, 300 հազար տեխնիկներ և ուրիշ մասնագետներ:

Կոլտնտեսային կարգերի պայմաններում նոր տեխնիկան հեշտացնում է կոլտնտեսականների աշխատանքը, բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, նպաստում է խորհըր-



դային գյուղացիության կուլտուրայի աճմանը և քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրության վերացմանը:

ԽՍՀՄ-ում մոտավորապես հազար գիտահետազոտական հիմնարկություններ աշխատում են գյուղատնտեսության բնագավառում: Մինչև հեղափոխությունը դրանք 8 անգամ ավելի քիչ եյին: 1913 թվին գյուղատնտեսության մեջ գիտական աշխատանք եյին կատարում 500 մարդ: Իսկ այժմ գյուղատնտեսության պրոբլեմների վրա աշխատող գիտական մարդկանց թիվը 14.038 է: 1915 թվին ցարական Ռուսաստանում բարձրագույն և միջնակարգ գյուղատնտեսական ուսումնական հաստատություններում սովորում եր 7,4 հազար մարդ, իսկ 1937 թվին արդեն 194 հազար, այսինքն՝ ավելի քան 25 անգամ:

Ցարական Ռուսաստանում 152,5 միլիոն հեկտար հող պատկանում եր ցարին, կալվածատերերին և վանքերին, 80 միլիոն հեկտար՝ կուլակներին և միայն 134,7 միլիոն հեկտար՝ աշխատավոր գյուղացիներին: Խորհրդային իշխանությունը 152,5 միլիոն հեկտար նախկին կալվածատիրական, վանքապատկան և պետական հողը տվեց գյուղացիներին: 25 միլիոն մենատնտես, մանր գյուղացիական տնտեսությունների փոխարեն մեզ մոտ այժմ հաշվում են 244 հազար կոլտնտեսություններ, վորոնք միավորում են ամբողջ գյուղացիական տնտեսությունների 93,5 %-ը: Պետական ակտերով կոլտնտեսություններին է ամրացված 370 միլիոն հեկտար հող՝ առհավետ և անվճար ոգտագործման համար: Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների ցանքի տարածությունը կազմում է յերկրի ամբողջ ցանքի տարածության 99 %-ը: Հացի համախառն պրոդուկցիայի 99 տոկոսն արտադրում են կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները: ԽՍՀՄ-ում մեկ տնտեսության ցանքի միջին չափը 484 հեկտար է, իսկ ԱՄՆ-ում՝ ընդամենը 23 հեկտար, Գերմանիայում՝ 3,5 հեկտար: Մեր սոցիալիստական գյուղատնտեսությունն աշխարհում ամենախոշորն է, ամենից ավելի մեքենայացվածը և միաժամանակ ամենաապրանքայինը: 1938 թ. մեր սոցիալիստական հացահատիկային տնտեսությունը բաց է թողել մոտավորապես 2,3 միլիարդ փութ ապրանքային հացահատիկ, այսինքն՝ 1 միլիարդ փութ ավելի, քան մինչհեղափոխական ժամանակաշրջանում:

Այն հողերը, վոր առաջ անպետք եյին համարվում, այժմ հաջողությամբ ներգրավվում են գյուղատնտեսության շրջանա-

ության մեջ: Ինտենսիվ կերպով չորացվում են ճահիճները, արմատախիլ են արվում մացառուտները, պլանաչափորեն հերկվում են խոպան հողերը, վոռոգվում են անապատները: Մի ամբողջ շարք պետական միջոցառումների հետևանքով ցանքի տարածությունը 1913 թվին յեղած 105 միլիոն հեկտարից լայնացել և 1938 թվին հասել ե մինչև 136,9 միլիոն հեկտարի:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Ժողովրդական տնտեսության ընդհանուր զարգացման ֆոնի վրա հսկայական հաջողություններ կան սոցիալիստական անասնապահության բնագավառում: Անասնապահական խոշոր տնտեսությունները հանդիսանում են սոցիալիստական անասնապահության զարգացման հիմքը: ԽՍՀՄ-ում արդեն ստեղծված են 406 հազարից ավելի կոլտնտեսային անասնապահական ֆերմաներ: Անասնապահության բնագավառում հաջողություններն զգալիորեն ավելի մեծ կարող եյին լինել, յեթե չլիներ ժողովրդի թշնամիների խլուրդային գործունեությունը: Խորհրդային ժողովուրդը բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ ջախջախեց այդ ստոր վոհմակը և անասնապահության բնագավառում հասավ մեծ հաջողությունների: Խոշոր յեղջյուրավոր անասունների և խոզաբուծության ուղղությամբ մեր անասնապահությունն այժմ արդեն անցել ե մինչպատերազմյան մակարդակից: ԽՍՀՄ-ում խոզերի գլխաքանակը մեկ և կես անգամ գերազանցում ե մինչհեղափոխական մակարդակին: Այդ մակարդակն անցված ե նաև խոշոր յեղջյուրավոր անասունների գլխաքանակի ուղղությամբ: Բավական ե ասել, վոր միայն յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում՝ 1933 թվից մինչև 1938 թիվը, միայն խոշոր յեղջյուրավոր անասունների աճը մեզ մոտ յեղավ 25 միլիոն գլուխ, վոր գերազանցում ե Գերմանիայի խոշոր յեղջյուրավոր անասունների գլխաքանակին: Այդ տարիներին խոզերի աճը հասավ 18,5 միլիոն գլխի: Այդ քանակը ավելի շատ ե, քան Իտալիայում, Նախկին Լեհաստանում և Ֆրանսիայում յեղած խոզերի ամբողջ գլխաքանակը միասին վերցրած: Հետաքրքիր ե այն, վոր խոզերի աճն առանձնապես բուռն կերպով տեղի յեր ունենում այն տեղերում, վորտեղ մինչև հեղափոխությունը խոզի միսը վորպես սնունդ գործածելը համարվում եր կրոնական որենքների և տեղական սովորությունների խախտում: Այսպես՝ Տաջիկական ԽՍՀ-ում յերկրորդ հնգամյակի տարիներին խոզերի գլխաքանակն աճել ե 500 տոկոսով, Հայկական ԽՍՀ-ում՝ 206 տոկոսով, Ղազախական ԽՍՀ-ում՝ 160 տոկոսով, Թուրքմենական ԽՍՀ-ում՝ 146 տոկոսով, Կիրգիզական ԽՍՀ-ում՝ 124 տոկոսով:



Այդ նույն ժամանակաշրջանում վոչխարների և այծերի գլխաքանակը կազմում եր 102,5 միլիոն գլուխ: Այստեղ մյուս հանրապետությունների առաջից են գնում Ղազախստանը, Ուկրաինան, Տաջիկստանը, Հայաստանը և Թուրքմենիան: Անասնապահության մյուս ճյուղերից ավելի դանդաղ ե զարգացել ձիաբուծությունը: Սակայն Վրացական, Ուկրաինական, Հայկական և Տաջիկական ԽՍՀ-ներում ձիերի գլխաքանակի աճը կազմում ե 20-ից մինչև 26 տոկոս: Անասունների գլխաքանակի այդպիսի արագ աճ աշխարհում վոչ մի կապիտալիստական յերկիր չի իմանում: Աճման այդպիսի տեմպերն աներևակայելի յեն մանր, մենատնտես գյուղացիական տնտեսության պայմաններում: Իսկ մենք ունենք բոլոր պայմանները կատարելու և գերակատարելու անասնապահության հետագա զարգացման վերաբերյալ այն վիթխարի խնդիրները, վոր դրել ե կուսակցության XVIII համագումարը յերրորդ հնգամյակում:

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԱՃՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում սեփական կայուն և ամուր կերի բազա ստեղծելը վճռական պայման ե հանդիսանում սոցիալիստական անասնապահության հաջող զարգացման և ամրապնդման համար:

ԽՍՀՄ-ն ունի բնական մարգագետինների ու արոտների հսկայական մասսիվներ, տափաստանների ու անտառների անսահման տարածություններ: ԽՍՀՄ-ը բռնում ե մի հսկայական տարածություն՝ 2·144·571,6 հազար հեկտար: 1932 թվին կատարված ինվենտարիզացիայի տվյալներով այդ տարածությունից 54·548 հազար հեկտարը գտնվում ե ուղղակի ոգտագործման բնական խոտհարքների տակ և 531·027,7 հազար հեկտար բնական արոտների տակ (դրանցից 244·249 հազ. հեկտ. տունդրային և անտառատունդրային են): Բացի դրանից՝ վորպես խոտհարք կողմնակիորեն ոգտագործվում ե 26·990,6 հազար հեկտար տարածություն ևս (դրանից 22·741,3 հազար հեկտ. խամերի վրա, մնացածն անտառներում, ճահիճներում և այլն): Ճիշտ այդպես

եվ անասուններ արածացնելու համար կողմնակիորեն օգտագործվում է 155·753,5 հազար հեկտար ևս (դրանից 18·483,8 հազար հեկտար անտառներում, 2·175,0 հազար հեկտար մացառուտներում, 1·217,2 հազ. հեկտար ճահիճներ, 39·059,1 հազար հեկտար հնձած բնական խոտհարքների նորաբույս խոտը, 36·653,8 հազ. հեկտ. խամեր, 54·061,5 հազ. հեկտար խոզաններ և այլն): Բացի դրանից՝ անասուններ արածացնելու համար այս կամ այն չափով օգտագործվում են ավազուտները (դրանք Միության մեջ 13·070,4 հազար հեկտար են) և աղուտները (ընդամենը 9·248,6 հազ. հեկտար): Այսպիսով ներկայումս խոտհարքի և արոտի օգտագործման համար պիտանի ամբողջ տարածությունը, հանելով նույնիսկ խոզանն ու ցելերը, կազմում է 700·000 հազար հեկտար բռնող հսկայական տարածություն: Ամենահամեստ հաշիվներով այդ տարածությունը կարող է տալ 350·000 հազար տոննից ոչ պակաս կեր՝ վերածած խոտի (3): Բնական այդ անսպառ հարստությունների կուլտուրական յուրացումը և ռացիոնալ օգտագործումը պետք է տան կերերի հսկայական առատություն:

Սակայն սոցիալիստական անասնապահությունը չի սահմանափակվում միայն բնական կերի բազայի օգտագործմամբ: Կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում սեփական կայուն, կուլտուրական կերի բազայի ստեղծումը վճռական պայման է հանդիսանում սոցիալիստական անասնապահության հաջող զարգացման ու ամրացման համար:

Բազմամյա և միամյա խոտերով զբաղված ցանքատարածությունների անշեղ աճման մասին վկայում են հետևյալ տվյալները.

| Տարիները | Կերի կուլտուրաները՝ հազար հեկտարներով | | |
|---|---|---|---|
| | Ընդհանուր տարածությունը | Դրանից | |
| | | Միամյա | Բազմամյա |
| 1913 թ. | 2·050 | 601·0 | 1·449,0 |
| 1934 թ. | 7·143,4 | 3·032,0 | 2·857,7 |
| 1938 թ. | 14·101,9 | 4·455,0 | 8·230,0 |



Երկու հնգամյակների ընթացքում 2,5 անգամ ավելացել է կերի արմատապտուղների ցանքերի տարածությունը:

| 1928 թ. | 1937 թ. |
|---|---|
| 304,4 հազ. հեկտ. | 776,3 հազ. հեկտ. |

Ստալինյան երրորդ հնգամյակի վերջում կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները պետք է կերի կուլտուրաների ցանքի տակ յեղած տարածությունը հասցնեն 23,6 միլիոն հեկտարի:

Ցարական Ռուսաստանում կերամշակող արդյունաբերություն բոլորովին չկար: ԽՍՀՄ-ում այդպիսի արդյունաբերություն, այսինքն՝ կոմբիկերերի արտադրություն, գոյություն ունի և նրա զարգացումն ընթանում է բուռն թափով: 1933 թ. պատրաստված է 172,3 հազար տոնն կոմբիկերեր, 1938 թվին այդ կերերի արդյունաբերությունն ավելացել, հասել է 1·059,8 հազար տոննի:

Շատ կոլտնտեսությունների ցուցանիշներից հիանալի յերեվում է դաշտային խոտացանության աճումը և նրա ազդեցությունը սոցիալիստական կոլեկտիվ տնտեսությունների ապահովվածության և յեկամտաբերության զարգացման վրա: Բայց առանձնապես վառ կերպով այդ յերևում է Բաշկիրական ԱԽՍՀ Չիշմինսկի ռայոնի Սաֆարովսկի գյուղխորհրդի՝ Լենինի անվան կոլտնտեսության օրինակից: Այդ կոլտնտեսությունը 1931 թվին ցանել եր միայն 31 հեկտար խոտցանկ (костер) և դրանից ստացել եր 43·300 ռուբլի յեկամուտ, իսկ 1937 թվին ցանված է յեղել 1250 հեկտար (դրանից 650 հեկտար սերմացու) և ստացվել է միլիոն ռուբլուց ավելի յեկամուտ: Սերմերի բերքատվությունը 6 տարվա ընթացքում բարձրացել, մեկ հեկտարից ստացվող 1,8 ցենտներից հասել է 5,1 ցենտների: Ճիշտ այդպես էլ Զապորոժյան մարզի Միխայլովսկի ռայոնի՝ Մարքս Հեյցի անվան կոլտնտեսությունը, դաշտային խոտացանություն և ցանքաշրջանառություններ մտցնելով, ապահովել է բերքատվության աճումը և ուժեղ կերի բազայի ստեղծումը, 3,5 անգամ շատացնելով խոտի, կանաչ խոտերի և հյութալի կերերի համախառն բերքահավաքը և 26%-ով բարձրացնելով հացահատիկային կուլտուրաների բերքը:

# ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՌԱՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՏԱԴԱՇՏԱՅԻՆ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Խորհտնտեսություններից և կոլտնտեսություններից շատերը բացառիկ խոշոր հաջողություններ են ձեռք բերել՝ ռացիոնալ կերպով կազմակերպելով ու ոգտագործելով կերի բազան և մտցնելով խոտադաշտային ցանքաշրջանառություններ:*

*Այսպես օրինակ՝ Միտիշչինսկի ռայոնի «Լենինե պոլյանի» խորհտնտեսությունը, որն ստեղծվել է Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ, ներկայացնում է կաթի օրինակելի ֆաբրիկա և հիմնականում բուծում է բարձրակիթ ոստֆրիզյան անասուններ, ամբողջ նախիրը կերերով լիովին ապահովելու համար կազմակերպել է կուլտուրական արոտ 8 դաշտյա ցանքաշրջանառությամբ, ընդ որում արոտում կիրառվում է կացոցային սիստեմը: Շատ հետաքրքիր են կերերը նախապատրաստելու կուլտուրական մեթոդները, որ խորհտնտեսությունը ձեռք է բերել, մեխանիզացիայի յենթարկելով բոլոր արտադրական պրոցեսները: Խորհտնտեսության այսպես կոչված կերախոհանոցը գտնվում է յերկհարկանի մի շենք իր նկուղով, որտեղ պահվում են արմատապտուղները և դրված է շոգեկաթսան: Կաթսան տաքացնում է կերախոհանոցը և տաք ջուր ու շոգի յե մատակարարում շոգեհարող ու դրոժացման յենթարկող բաժիններին: Առաջին հարկում տեղավորված են խոտ-ծղոտահատիչը, շոգեհարիչը չորս հսկա չաներով միասին, արմատալվացող, քուսպամանրող մեքենաները, աղացը և դրոժացնող բաժանմունքը: Այդ ամբողջ բարդ ագրեգատը, որ անասունների համար կեր է պատրաստում, աշխատում է ավտոմատիկ կերպով:*

*Սակավ բերքատու պոդզոլային հողերից հացահատիկների բարձր բերք (հեկտարից 20,65 ցենտներ տարեկան, հեկտարից 18,77 ցենտներ ցորեն) է ստացել Մոսկվայի մարզի «Տրուդովիկ» կոլտնտեսությունը՝ մտցնելով կանոնավոր իննըդաշտյա խոտադաշտային ցանքաշրջանառություններ:*

*«Ռոդնիկ նովիյ» կոլտնտեսությունում (Արևմտյան Ղազախստանի մարզ) կիրառվում է արոտների խիստ տիպավորում, կացոցային արածացում և անասունների արածացման ռացիոնալ յեղանակներ, որի հետևանքով կոլտնտեսությունը հասել է ձիաբուծության զարգացման պլանի կատարման բարձր ցուցանիշների, այդ պատճառով էլ ձիերի գլխաքանակի վերարտադրման օրինակելի աշխատանքի համար կոլտնտեսության նախագահ Աբատով Մաքզումը պարգևատրվել է Լենինի շքանշանով:*

*Կերի բազայի ստեղծման ու ամրացման վերաբերյալ հրակայական աշխատանք կարելի յե տեսնել Կիրգիզական ԽՍՀ-ի Կանտսկի ռայոնի «Տրուդ» կոլտնտեսության օրինակով, որը լավ կազմակերպել է խոտի մթերումը, բազմամյա խոտերի խոտացանությունը և սերմարտադրությունը: Ընդհանրապես ասած՝ Կիրգիզական ԽՍՀ-ի սոցիալիստական տնտեսությունները շատ նպատակավոր կերպով աչքի յեն ընկնում արոտային տնտեսության կազմակերպումը բարելավելով: Անհրաժեշտ է հիշել, որ Կիրգիզիան ունի 11 միլիոն հեկտար լեռնային մարգագետիններ ու արոտներ, և ահա շատ տնտեսություններում կատարվում է արոտների կանոնավոր հերթափոխություն՝ ըստ սեզոնների և անասունների տեսակների: Ձմեռային արոտներում ստեղծվում է կերերի ապահովագրական ֆոնդ: Կիրգիզիայում լիովին վերացված է «ջուտը», այսինքն՝ սառցապատումների և բուքերի ժամանակ անասունների ձմեռա-գարնանային կերազրկության վտանգը, որի հետևանքով մինչև հեղափոխությունը, յերբ կերերի կազմակերպված մթերումը բացակայում էր, մեծ չափով կոտորվում էր թե՛ խոշոր անասուն, թե՛ վոչխար:*

*Հիանալի խոտադաշտային ցանքաշրջանառություն է կիրառել «Սպարտակ» խորհտնտեսությունը, որը գտնվում է Պովոլժյեյի Գերմանացիների ԱԽՍՀ Ֆեդորովսկի կանտոնի չորային ռայոնում: Խորհտնտեսությունը յերաշտին հակադրել է կանոնավոր խոտադաշտային ցանքաշրջանառություն, անտառապաշտպան շերտեր և բարձր ագրոտեխնիկա: Խորհտնտեսությունում մտցված է հետևյալ ցանքաշրջանառությունը՝ 1) սև ցել, 2) տարեկան՝ բազմամյա խոտերի յենթացանքով, 3-4) բազմամյա խոտեր՝ հնձելու համար, 5—6) բազմամյա խոտեր՝ սերմ ստանալու համար, 7) գարնանացան ցորեն (կարծր), 8) գարնանացան ցորեն (կարծր), 9) գարնանացան ցորեն (փափուկ) + վարսակ+գարի: Բացի հացահատիկներից խորհտնտեսությունն արտադրում է բազմամյա խոտերի սերմեր, որոնք նա հսկայական պարտիաներով հանձնում է պետությանը:*

*Ոմսկի մարզի Կալաչինսկի ռայոնի «Նովիյ միր» կոլտնտեսությունը մտցրել է խոտադաշտային ճիշտ ցանքաշրջանառություն և ձեռք է բերել բարձր բերքատվություն ու ստեղծել է կերի կայուն բազա:*

1936 թվին կոլտնտեսությունում յեղել է 60 հեկտար բազմամյա խոտ, 1938 թվին՝ 189 հեկտար, 1939 թվին՝ 245 հեկտար:

Չկալովի մարզի Բուզուլուկսկի ռայոնի, «Լենինյան ուղի» («Путь Ленина») կոլտնտեսությունը տնտեսության տերիտորիան կազմակերպել է ակադ. Վ. Ռ. Վիլյամսի ուսմունքի հիման վրա և մտցրել է յերկու ցանքաշրջանառություն.

| I ցանքաշրջանառություն դաշտային | II ցանքաշրջանառություն կերային |
| --- | --- |
| 1. Սև ցել | 1-4 բազմամյա խոտեր |
| 2. Աշնանացան՝ բազմամյա խոտերի յենթացանքով | 5. Գարնանացան ցորեն |
| 3–4. Բազմամյա խոտեր (ժիտնյակ և առվույտ). | 6. Սիլոսաբույսեր |
| 5–6. Գարնանացան ցորեն | 7. Միամյա խոտեր |
| 7. Շարահերկ | 8. Վարսակ, գարի՝ խոտաբույսերի յենթացանքով: |
| 8. Գարնանացան ցորեն | |
| 9. Վարսակ, գարի | |

Կոլտնտեսությունն այս ցանքաշրջանառությունները մտցնելով հասել է բարձր բերքատվության և առատ, բարձրորակ կերի բազայի ստեղծման:

Սրանց նման օրինակներ կարելի յեր շատ ու շատ բերել, բայց ասածն էլ արդեն բավականին ակնառու կերպով ցույց է տալիս, որ մեր սոցիալիստական տնտեսությունները՝ խորհտնտեսություններն ու կոլտնտեսություններն արդեն ամուր կերպով կանգնել են տերիտորիան ռացիոնալ իրացնելու և կազմակերպելու ճանապարհի վրա, կերերի արտադրության և հայթայթման, ագրոտեխնիկայի կուլտուրական մեթոդներ կիրառելու ճանապարհի վրա, առատ ու բարձրորակ կերի բազա ստեղծելու ճանապարհի վրա:

## ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՅԵՎ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մինչհեղափոխական անցյալում գյուղատնտեսության մեջ մարգագետինները բարելավելու և նրանց արտադրողականությունը բարձրացնելու վերաբերյալ միջոցառումներ համարյա թե չէյին կիրառվում: Մինչդեռ ԽՍՀՄ-ում վերջին յերեք տարիներում միայն կոլտնտեսություններում 5.537,4 հազար հեկտարի վրա կատարված է մարգագետինների և արոտների արմատական ու մակերեսային բարելավում: Ընդ սմին, թե ինչպիսի արդյունքների յեն հասել առանձին տնտեսություններ, ցույց են տալիս հետևյալ տվյալները:



Մոսկվայի մարզի Ռամենսկի ռայոնի Թելմանի անվան առաջավոր կոլտնտեսությունը 1935 թվին, մինչև ագրոտեխնիկայի նորագույն ձևեր կիրառելը, յերբ մելիորացիա չէր կատարված, իր դաշտերից ու մարգագետիններից հավաքել է՝ 2837 ցենտներ մարգագետնի խոտ, 720 ցենտներ միամյա ու բազմամյա ցանովի խոտ, 250 ցենտներ հյութալի կեր, ընդ որում կոլտնտեսության անասուններին կանաչ ոժանդակ կեր բոլորովին չէր տալիս: 1938 թվին, մարգագետինների ու դաշտերի բարելավման հետևանքով, կերի կուլտուրաների համախառն բերքը կոլտնտեսությունում զգալիորեն աճեց: Մարգագետնի խոտ հավաքվեց՝ 3673 ցենտներ, միամյա և բազմամյա խոտեր՝ 3767 ցենտներ, արմատապտուղ և սիլոս՝ 8578 ցենտներ: Մոսկվա գետի առափնյա մարգագետիններից կոլտնտեսությունն առաջ հեկտարից հավաքում էր 12—13 ցենտներ խոտ: Մարգագետիններում խոտասերմերի յենթացանքը բարձրացրեց խոտի բերքը մինչև 35,7 ցենտների: Իսկ հանքային պարարտանյութերով ոժանդակ սնունդ տալը բարձրացրեց խոտի բերքը, հասցնելով հեկտարից 60 ցենտների:

Խոտհունձը խոտերի ծաղկման ժամանակ և սեղմ ժամկետներում կատարելու շնորհիվ՝ Թելմանի անվան կոլտնտեսությունն այժմ յուրաքանչյուր հեկտարից հավաքում է սպիտակուցային նյութեր 30—40 տոկոսով ավելի, համեմատած խոտերի ծաղկման վերջին շրջանում կատարված խոտհունձի հետ:

Սմոլենսկի մարզի Սիչևսկի ռայոնի «Պերեկլիչկա» կոլտնտեսությունն ընդմիշտ վերջ է տվել հին խղճուկ արոտներին, որոնցից անասունները ոչինչ չէյին ստանում: Այդ արոտների փոխարեն ստեղծված են մարգագետնա-արոտային ցանքաշրջանառություններ ունեցող կուլտուրական հողատեսքեր: Առաջ բնական մարգագետինների յուրաքանչյուր հեկտարից կոլտնտեսությունը հավաքում էր 11,7 ցենտներ խոտ, այժմ նա ստանում է 32,8 ցենտներ բարձրորակ խոտ:

Մարգագետինների և արոտների արմատական բարելավման աշխատանքների լայն ծավալման տեսակետից Համամիութենա-

Հանրային Գրադարան Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССРА

կան Գյուղատնտեսական Ցուցահանդեսում առանձնապես աչքի են ընկնում Գորկու մարզի Արզամասի ռայոնի կոլտնտեսությունները: Խոտի բարձր բերքի համար ստախանովյան արշավի առաջավորները Արզամասի ռայոնում հասել են բացառիկ բարձր ցուցանիշների: Կիրովի անվան կոլտնտեսության ողակավար Ի. Գ. Տուզովը 1937 թվին 5 հեկտար տարածությունից 2 հունձով յուրաքանչյուր հեկտարից հավաքել է 88,8 ցենտներ խոտ, մինչդեռ ամբողջ կոլտնտեսության խոտի միջին բերքը մեկ հեկտարից յեղել է 11 ցենտներ: Նույն տարածությունից ընկ. Տուզովը 1938 թվին մեկ հունձով հեկտարից ստացել է 54 ցենտներ խոտ:

Նույն Արզամասի ռայոնի «Կրասնայա զվեզդա» կոլտնտեսության ողակավարուհի Ա. Ֆ. Կրիլովան 1938 թվին 3 հեկտար տարածությունից հավաքել է հեկտարից 83,8 ցենտներ խոտ: Նույն կոլտնտեսության ողակավար Ա. Ֆ. Մինեյեվան 1937 թվին 3 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացել է 92,7 ցենտներ խոտ, իսկ 1938 թվին՝ մեկ հունձով 51,7 ցենտներ: «Զարյա» կոլտնտեսության ողակավար Ի. Մ. Մակարովը, գործադրելով օժանդակ սնուցում, փոցխում և մի շարք այլ միջոցառումներ, հինգ հեկտարանոց մարգագետնի յուրաքանչյուր հեկտարից հավաքում է 71,3 ցենտներ հիանալի խոտ:

Խոտի բարձր բերք ստանալու առաջավորների թիվն Արզամասի ռայոնում տարեց-տարի ավելանում է: 1937 թվին խոտի բարձր բերք են ստացել 9 կոլտնտեսություն— 166 առաջավորներ, 1938 թ.՝ 17 կոլտնտեսություն— 376 առաջավորներ:

Իսկ ի՞նչ ձևով են ձեռք բերել Արզամասի ռայոնի կոլտնտեսականներն այդ բարձր ցուցանիշները: Ընդհանուր գծերով նրանց գործադրած միջոցառումները կարող են հանգել հետևյալ հիմնական խմբերին.

1) Գարնանը և առաջին հունձից հետո բույսերի օժանդակ սնուցումը մոխրով, թռչունի ծերտով, ֆեկալիաներով, գոմաղբաջրով:

2) Մարգագետնի վրա փռել տորֆային կոմպոստ՝ ֆեկալիաների հետ խառնած:

3) Մարգագետինների վրա վոչնչացնել ճմբերը, մացառները և խոշորացողուն մոլախոտերը:

4) Մարգագետինը ջրել վոռոգիչ առուներից և մանր դետակներից ջուր բաց թողնելով:



5) Խոտը հավաքել ծաղկման սկզբում և կատարել յերկու հունձ:

Պետք է նշել, վոր արոտներն ու մարգագետինները բարելավելու և ստախանովյան բերք ստանալու գործում աչքի ընկնող տեղ են բռնում նաև Հայկական ԽՍՀ-ի մի շարք կոլտնտեսականներ: Այսպես օրինակ՝ Անասնապահական հանրապետական կայանի ավագ մասնագետ Շ. Մ. Աղաբաբյանի օժանդակությամբ և կոնսուլտացիաներով Ի. Ցա. Կոնովալովը (Կալինինոյի ռայոն Կաղանովիչի անվան կոլտնտեսություն) իրենց մարգագետինների վրա կիրառելով մակերեսային բարելավում (քարեր հավաքելը, մոլախոտերից մաքրելը, հանքային պարարտանյութեր, թռչունի ծերտ, մոխիր մտցնելը և այլն) 1938 թվին 2 հեկտար հողամասից, յերկու հունձ անելով ստացավ ամեն մի հեկտարից 68 ցենտներ խոտ: Ցա. Գ. Մորդվինը (նույն ռայոնի Ստալինի անվան կոլտնտեսություն) 1938 թվին 2 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացավ 57,5 ցենտներ խոտ, իսկ 1939 թվին՝ հեկտարից 64,2 ցենտներ: Կոլտնտեսական Փ. Գ. Տրեգուբովը 1938 թվին, գործադրելով խոտերի յենթացանք և մտցնելով տեղական պարարտանյութեր, հեկտարից ստացավ 57 ցենտներ խոտ, իսկ 1939 թվին՝ 64,5 ցենտներ: Կոլտնտեսական Բախոլդինը 1939 թվին 4 հեկտար տարածության վրա կիրառելով մակերեսային բարելավման նույն միջոցառումները հեկտարից ստացավ՝ 77 ցենտներ խոտի բերք: Նույն ռայոնի կոլտնտեսական Ի. Ի. Դիմիտրիևը հեկտարից ստացավ 68 ցենտներ խոտ (մեկ հունձով):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայկական ԽՍՀ Կալինինյան ռայոնն առաջավոր է հանդիսանում մարգագետիններից ու արոտներից կերերի բարձր բերք ստանալու գործում:

Կալինինյան ռայոնում շատ հետաքրքիր են անասնապահական կայանի հենակետի աշխատանքների արդյունքները (Շ. Մ. Աղաբաբյանի փորձերը). այդ հենակետը մարգագետինների արմատական բարելավում և հատուկ խոտախառնուրդների ցանք կատարելուց հետո ստացել է հեկտարից 63,7—68,3 և նույնիսկ 77,9 ցենտներ խոտ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Գյուղատնտեսության մեխանիզացիայի բնագավառում յեղած նվաճումները ցուցադրվում են «Մեխանիզացիա» կոչվող վիթ-

խարի պավիլիոնում, վորն ամենախոշոր և վեհապանծ կառուցումն է Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի տերիտորիայի վրա։

Ցարական Ռուսաստանում գյուղատնտեսության տեխնիկան խղճուկ էր և չափազանց պրիմիտիվ։ Հողի մշակման հիմնական գործիքներն էին արորները, չութերը և փայտյա գութանները. 1910 թվի հաշվեհամարի համաձայն դրանց թիվը յերկրում 10 միլիոն էր։ Իսկ յերկաթյա գութաններ կային ընդամենը 4,2 միլ. հատ, ձիու չարքացաններ՝ 323,7 հազ. հատ և դրանք էլ գերազանցապես գտնվում էին կալվածատիրական ու կուլակային տնտեսություններում։ Արորի վարի առավելագույն խորությունը կազմում էր 8—10 սանտիմետր, իսկ փայտյա գութանինը՝ 10—12 սանտիմետր։ Ցանքը կատարվում էր գլխավորապես ձեռքով, սերմերը հողով ծածկում էին փայտե փոցխերով։ 1910 թվի հաշվեհամարի համաձայն յերկրում կային 17,7 միլիոն հատ այդպիսի փոցխեր։ Ծանծաղ վարի և ընդհանրապես հողը վատ մշակելու հետևանքով ցարական Ռուսաստանում բերքատվությունը շատ ցածր էր և անկայուն։

Այժմ նախնադարյան չութը, արորը, փայտե գութանն ընդմիշտ անցել են ավանդությունների շարքը։ Սակայն վորպեսզի կարելի լիներ համեմատել «այժմյան դարն ու անցյալ դարը», մինչհեղափոխական գյուղի խղճուկ «մեքենաները» Ցուցահանդեսում դրված են բազմախոփ հիանալի գութանների կողքին, վորոնցով հնարավոր է մինչև 27 սանտիմետր խորությամբ վարել։

1938 թվին սոցիալիստական դաշտերում աշխատում էին 5,5 միլիոն յերկաթյա ձիքարշ գութաններ և 493.5 հազար տրակտորային գութաններ։ Տրակտորի գութաններով գարնանացանների համար կատարված վարը 1938 թվին կազմում էր 71,5 տոկոս, իսկ ձիաքարշ գութաններով կատարվածը՝ միայն 28,5 տոկոս։

1938 թվին սոցիալիստական յերկրագործությունն ուներ 676,4 հազար ձիաքարշ չարքացան, 265,5 հազար տրակտորային չարքացան։ 1910 թվին գարնանացանների 74,4 տոկոսը ցանվել է ձեռքով, իսկ 1938 թվին յուրաքանչյուր 1000 հեկտարից 128 հեկտարը ցանված էր ձեռքով, 567 հեկտարը՝ տրակտորի չարքացաններով, մնացածը ձիաքարշ չարքացաններով։

Ցարական Ռուսաստանում չարահերկ կուլտուրաների միջշարքային մշակումը կատարվում էր գլխավորապես ձեռքով և



միայն աննշան չափով կատարվում էր միձիանի կուլտիվատորներով։ Սոցիալիստական դաշտերում աշխատում են 238 հազար տրակտորային և 221 հազարից ավելի ձիաքարշ կուլտիվատորներ։

Դեռ բոլորովին վերջերս, 1928 թվին, հացահատիկային կուլտուրաների ամբողջ տարածության 44,4 տոկոսը ԽՍՀՄ-ում հնձում էին գերանդիով և մանգաղով։ Ամբողջ հնձվելիք տարածության յերկու հինգերորդը (45,7 տոկոսը) կալսում էին շղթաներով և ձեռքի ուրիշ միջոցներով և միայն 1,3 տոկոսը մեխանիկական շարժափոկ ունեցող կալսիչներով։ 1938 թվին ձեռքով հավաքվեց 8,5 տոկոս, իսկ հասկավոր կուլտուրաներով բռնված ամբողջ տարածության (48,4%-ը) համարյա կեսը հնձվեց-հավաքվեց ամենակատարյալ մեքենաներով՝ կոմբայններով։ Հացահատիկների 95 տոկոսը կալսվեց մեխանիկական շարժափոկ ունեցող կալսիչներով։ 1938 թվի վերջում մեր յերկրում աշխատում էին 153.500 կոմբայն։

Մինչհեղափոխական Ռուսաստանում սերմերը զտում էին քամու միջոցով, կրուժալներով և միայն աննշան չափով քամհարներով և ձեռքի սորտավորիչներով։ Ներկայումս սոցիալիստական յերկրագործության մեջ գործադրվում են ամենաբազմազան հատիկազտիչ մեքենաներ՝ այդ թվում նաև շատ բարձր արտադրողականություն ունեցող մեքենաներ։ Մինչհեղափոխական Ռուսաստանը տեխնիկական կուլտուրաների համար մեքենաներ բոլորովին չէր տեսել։ 1938 թվին տեխնիկական կուլտուրաների տակ արդեն կար 11 միլիոն հեկտար, ընդ վորում այդ տարածության մեծ մասի վրա աշխատում էին բազմաթիվ հատուկ գործիքներ, մեքենաներ, վորոնք պատրաստվել են խորհրդային գործարաններում։ Մեր գործարաններն արտադրում են նաև բազմապիսի մեքենաներ պտղատու—հատապտղատու և բանջարանոցային կուլտուրաներ մշակելու և խոտհունձը մեքենայացնելու համար։

Այստեղ միանգամայն անհնարին է տալ Ցուցահանդեսում ցուցադրված այդ վիթխարի մեքենայական պարկի սքանչելի հատկությունների բնութագիրը։ Ցես ուզում եմ ուշադրություն դարձնել միայն մի շարք մեքենաների վրա, վորոնց գործադրությունը մեծ նշանակություն ունի դաշտային ու մարգագետնային կերահայթայթման մեջ։

Տրակտորներից շատ հետաքրքիր է ՍՏԶ—ՆԱՏԻ (СТЗ—

խարի պավիլյոնում, վորն ամենախոշոր և վեհապանծ կառուցումն է Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի տերիտորիայի վրա:

Ցարական Ռուսաստանում գյուղատնտեսության տեխնիկան խղճուկ էր և չափազանց պրիմիտիվ: Հողի մշակման հիմնական գործիքներն էին արորները, չութերը և փայտյա գութանները. 1910 թվի հաշվեհամարի համաձայն դրանց թիվը յերկրում 10 միլիոն էր: Իսկ յերկաթյա գութաններ կային ընդամենը 4,2 մլ. հատ, ձիու շարքացաններ՝ 323,7 հազ. հատ և դրանք էլ գերազանցապես գտնվում էին կալվածատիրական ու կուլակային տնտեսություններում: Արորի վարի առավելագույն խորությունը կազմում էր 8—10 սանտիմետր, իսկ փայտյա գութանինը՝ 10—12 սանտիմետր: Ցանքը կատարվում էր գլխավորապես ձեռքով, սերմերը հողով ծածկում էին փայտե փոցխերով: 1910 թվի հաշվեհամարի համաձայն յերկրում կային 17,7 միլիոն հատ այդպիսի փոցխեր: Ծանծաղ վարի և ընդհանրապես հողը վատ մշակելու հետևանքով ցարական Ռուսաստանում բերքատվությունը շատ ցածր էր և անկայուն:

Այժմ նախնադարյան չութը, արորը, փայտե գութանն ընդմիշտ անցել են ավանդությունների շարքը: Սակայն վորպեսզի կարելի լիներ համեմատել «այժմյան դարն ու անցյալ դարը», մինչհեղափոխական գյուղի խղճուկ «մեքենաները» Ցուցահանդեսում դրված են բազմախափ հիանալի գութանների կողքին, վորոնցով հնարավոր է մինչև 27 սանտիմետր խորությամբ վարել:

1938 թվին սոցիալիստական դաշտերում աշխատում էին 5,5 միլիոն յերկաթյա ձիքարշ գութաններ և 493,5 հազար տրակտորային գութաններ: Տրակտորի գութաններով գարնանացանների համար կատարված վարը 1938 թվին կազմում էր 71,5 տոկոս, իսկ ձիաքարշ գութաններով կատարվածը՝ միայն 28,5 տոկոս:

1938 թվին սոցիալիստական յերկրագործությունն ուներ 676,4 հազար ձիաքարշ շարքացան, 265,5 հազար տրակտորային շարքացան: 1910 թվին գարնանացանների 74,4 տոկոսը ցանվել է ձեռքով, իսկ 1938 թվին յուրաքանչյուր 1000 հեկտարից 128 հեկտարը ցանված էր ձեռքով, 567 հեկտարը՝ տրակտորի շարքացաններով, մնացածը ձիաքարշ շարքացաններով:

Ցարական Ռուսաստանում շարահերկ կուլտուրաների միջշարքային մշակումը կատարվում էր գլխավորապես ձեռքով և



միայն աննշան չափով կատարվում էր միձիանի կուլտիվատորներով: Սոցիալիստական դաշտերում աշխատում են 238 հազար տրակտորային և 221 հազարից ավելի ձիաքարշ կուլտիվատորներ:

Դեռ բոլորովին վերջերս, 1928 թվին, հացահատիկային կուլտուրաների ամբողջ տարածության 44,4 տոկոսը ԽՍՀՄ-ում հնձում էին գերանդիով և մանգաղով: Ամբողջ հնձվելիք տարածության յերկու հինգերորդը (45,7 տոկոսը) կալսում էին շղթաներով և ձեռքի ուրիշ միջոցներով և միայն 1,3 տոկոսը մեխանիկական շարժափոկ ունեցող կալսիչներով: 1938 թվին ձեռքով հավաքվեց 8,5 տոկոս, իսկ հատկավոր կուլտուրաներով բռնված ամբողջ տարածության (48,4%-ը) համարյա կեսը հնձվեց-հավաքվեց ամենակատարյալ մեքենաներով՝ կոմբայններով: Հացահատիկների 95 տոկոսը կալսվեց մեխանիկական շարժափոկ ունեցող կալսիչներով: 1938 թվի վերջում մեր յերկրում աշխատում էին 153.500 կոմբայն:

Մինչհեղափոխական Ռուսաստանում սերմերը զտում էին քամու միջոցով, կրուժալներով և միայն աննշան չափով քամհարներով և ձեռքի սորտավորիչներով: Ներկայումս սոցիալիստական յերկրագործության մեջ գործադրվում են ամենաբազմազան հատիկազտիչ մեքենաներ՝ այդ թվում նաև շատ բարձր արտադրողականություն ունեցող մեքենաներ: Մինչհեղափոխական Ռուսաստանը տեխնիկական կուլտուրաների համար մեքենաներ բոլորովին չեր տեսել: 1938 թվին տեխնիկական կուլտուրաների տակ արդեն կար 11 միլիոն հեկտար, ընդ վորում այդ տարածության մեծ մասի վրա աշխատում էին բազմաթիվ հատուկ գործիքներ, մեքենաներ, վորոնք պատրաստվել են խորհրդային գործարաններում: Մեր գործարաններն արտադրում են նաև բազմապիսի մեքենաներ պտղատու-հատապտղատու և բանջարանոցային կուլտուրաներ մշակելու և խոտհունձը մեքենայացնելու համար:

Այստեղ միանգամայն անհնարին է տալ Ցուցահանդեսում ցուցադրված այդ վիթխարի մեքենայական պարկի սքանչելի հատկությունների բնութագիրը: Յես ուզում եմ ուշադրություն դարձնել միայն մի շարք մեքենաների վրա, վորոնց գործադրությունը մեծ նշանակություն ունի դաշտային ու մարգագետնային կերահայթայթման մեջ:

Տրակտորներից շատ հետաքրքիր է ՍՏԶ—ՆԱՏԻ (СТЗ—

НАТИ) թրթուրավոր տրակտորը, վորն ստեղծել է Գիտական էքսպերիմենտալ և գծագրային ավտոտրակտորային ինստիտուտը (НАТИ) Ստալինգրադի տրակտորային գործարանի հետ միասին: Այդ տրակտորը, թրթուրավոր ընթացքի և շարժիչի լավացրած կոնստրուկցիայի շնորհիվ, ունի օգտակար գործողության զգալիորեն ավելի մեծ գործակից, քան անիվավորը, հետևաբար և վորպես ներքին այրման մեքենա ավելի արտադրողական է:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Ստալինեց—65» ՉՏԶ տրակտորի Մ-17 դիզելային շարժիչը: Դիզելային տրակտորն աշխատում է նավթային վառելանյութի ծանր, ավելի էժան սորտերով և կարբյուրատորային շարժիչ ունեցող ՉՏԶ-ի համեմատությամբ մեծ հզորություն ունենալով, 30—35 տոկոս ավելի քիչ վառելանյութ է ծախսում: Մեծ տարածում կարող է ստանալ ԽՏԶ—3 թրթուրավոր տրակտոր քարշիչը (ТЯГАЧ), վորը նախատեսնված է գյուղատնտեսական աշխատանքների և բեռների փոխադրության համար:

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Կիրովի մեքենաշինական գործարանի (Լենինգրադում) շարահերկ (ունիվերսալ) տրակտորները՝ «Ունիվերսալ—1»-ը (У—1) և «Ունիվերսալ—2»-ը (У—2), վորոնք գործադրվում են միջշարքային տարածությունների կուլտիվացիայի համար: Կուլտիվատորի վրա սարքում են հատուկ պարարտացուցիչ, վորի հետևանքով էլ կուլտիվացիայի հետ միաժամանակ կարելի յե հողի մեջ մացնել հանքային պարարտանյութեր: Վերջապես հենց նույն տրակտորների վրա կարելի յե հարմարեցնել «Վուլկան» գործարանի հատուկ սրսկիչներն ու փոշեհարիչները, վորոնք նախատեսնված են դաշտի ու այգու կուլտուրաների վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու համար:

У—2 տրակտորին կարելի յե հարմարեցնել նաև ԶՆՍ (ЗНС) հատուկ ճակնդեղահանիչը, վորը ԽՍՀՄ-ում մեծ տարածում է ստացել և վորի արտադրողականությունը 70 անգամ ավելի բարձր է ձեռքով ճակնդեղ քանդելուց: Ցուցահանդեսում ցույց են տրված ակադ. Մ. Ս. Սիվաչենկոյի և ինժեն. Կարենկովի կոնստրուկցիայի հիանալի ճակնդեղահան մեքենաները բունկերով միասին: Այդ յերկու մեքենաներն արտադրում է «Սերպ ի Մոլոտ» գործարանը. Նրանք խիստ կրճատում են բանուժի ծախսումը:



Հատուկ կարտոֆիլատնկիչ մեքենաները համարյա 18 անգամ կրճատում են բանուժի ծախսումը, կուլտիվատոր-բուկլիչները՝ 8 անգամ և սորտավորիչները՝ 3—4 անգամ: Կարտոֆիլահավաք մեքենան մեկ հեկտարի վրա 5—6 մարդ-օրվա խնայողություն է տալիս՝ համեմատած ձիով և ձեռքով կատարված աշխատանքի հետ:

Ցուցահանդեսում ցուցադրվում են 4 և 5 խոփանի գութաններ, տափակ (յեվրոպական) շրջանակով, թափովի պողպատե կանգնակով և նախախոփիկներով: Այս տիպի գութանները դուրս են մղում կեռավոր շրջանակ ունեցող նախկին գութաններին: Յուրաքանչյուր կորպուսի առի լայնությունն է 35 սանտիմետր: Շատ հետաքրքիր և մեզ համար շատ հեռանկարային է Չելյաբինսկում Կոլյուշչենկոյի անվան գործարանի պատրաստած շտանգային կուլտիվատորը, վորը նախանշված է կոճղարմատավոր մոլախոտերից դաշտը մաքրելու համար:

Շատ հետաքրքիր է Խարկովի «Սերպ ի Մոլոտ» գործարանի արտադրած սերմազտիչ էլեկտրոմեքենայական սարքը, վորը նախանշված է կուլտուրական խոտերի սերմերից գաղձը զտելու համար: Լայն տարածում կարող է ստանալ նաև ՍՈՒՎ-Գ (СУВ—Г) սերմազտիչ սարքը՝ կտավհատի, յերեքնուկի և առվույտի սերմերը մաքրելու համար:

Շատ հեռանկարային է Գոմսելմաշ գործարանի արտադրած սիլոսահատ-մանրիչ «Ունիվերսալ»-ը, վորը նախանշված է կանաչ և կոպիտ կերեր վերամշակելու համար (անմիջապես կերակրելու համար և սիլոսացնելու համար), ինչպես նաև վորպես կեր մանրացնելու յեգիպտացորենը, վարսակը, քուսպը և այլն:

Ռոստսելմաշ գործարանը ցուցադրում է յերկու տիպի լայնառ խոտհարներ, վորոնք համակցվելով լայնառ փոցխերին, իրենցից ներկայացնում են խոտհարափոցխային ագրեգատ: Հետաքրքիր են հատուկ խոտ կիտողները և դեզ դնողները:

Պետք է մատնանշել նաև այն, վոր ԽՍՀՄ-ում ավիացիան լայն կերպով օգտագործվում է գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների դեմ պայքարելու և պարարտանյութեր շաղ տալու համար: Վնասատուների դեմ պայքարելու ավիացիոն-քիմիական մեթոդն ամենից ավելի էժան է, արագ և էֆեկտավոր: Այսպես օրինակ՝ մորեխի դեմ 1000 հեկտարը մշակելու համար պահանջվում է՝ ձեռքով— 16·000 ժամ, ձիով—1600

ժամ, տրակտորով— 800 ժամ, իսկ ավիացիայով ընդամենը միայն 5 ժամ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Հիդրոէլեկտրոֆիկացիա» հատուկ պավիլիոնը, որն ակնառու կերպով ցույց է տալիս, որ գյուղատնտեսության էլեկտրոֆիկացիայի հիմնական միջոցներից մեկն է հանդիսանում տեղական մանր ու փոքր գետերի ջրային եժան էներգիայի օգտագործումը: Էլեկտրոէներգիան կիրառում է գտնում ոչ միայն կոլտնտեսային գյուղի կենցաղում, այլ և նրա կիրառումն օրեցօր ծավալվում է անմիջականորեն գյուղատնտեսության մեջ: Նա կիրառվում է դաշտավարության մեջ (էլեկտրովար, կալսում), անասնապահության մեջ (կերերի պատրաստում, կիթ, ոչխարների խուզում), թռչնաբուծության մեջ (ձագեր հանելը ինկուբատորում), բանջարաբուծական տնտեսության մեջ (էլեկտրոջերմոցներ, ջերմատներ) և այլն:

Կոլտնտեսության պայմաններում 12 կիլովատանոց ավտոմատ հիդրո-էլեկտրոկայանի կառուցման արժեքը նստում է 40—45 հազար ռուբլի: Մեր կոլտնտեսություններից շատերը, մանավանդ Հայկական ԽՍՀ-ում, որտեղ մենք ամեն քայլափոխում ունենք մինչև այժմ չօգտագործվող փոքր գետակներ, հեշտությամբ կարող են իրենց ուժերով կառուցել փոքր հիդրոկայաններ և այդպիսով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, նոր զարկ տալ կոլտնտեսականների լայն մասսաների կուլտուրայի է՛լ ավելի արագ բարձրացմանը: Այդ տեսակետից մյուս հանրապետությունների առաջից են գնում Բելոռուսիան, որտեղ 1936—39 թվերին շահագործման է հանձնված 23 կոլտնտեսային հիդրոկայան, և Վրաստանը, որտեղ այդ նույն ժամանակամիջոցում շարքի մեջ են մտել 18 կոլտնտեսային հիդրոկայաններ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոլտնտեսային կարգի պայմաններում նոր տեխնիկան թեթևացրեց կոլտնտեսականների աշխատանքը և բարձրացրեց նրա արտադրողականությունը: Ստախանովյան հզոր շարժումն ընդգրկեց միլիոնավոր բանվորներ ու բանվորուհիներ, կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ և ծնեց գիտության ու տեխնիկայի հարյուրավոր և հազարավոր նովատորներ: Ստախանովականները՝ մեր ժամանակի առաջավոր մարդիկը, համարձակ կեր-



պով ջարդում են հին նորմաները, սահմանները և առաջ են շարժում արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Ստախանովյան շարժումը որպես սոցիալիստական մրցման բարձրագույն ձև մեր երկրում ծնվեց նոր տեխնիկայի հիման վրա, բանվորների ու գյուղացիների նյութական դրության արմատական բարելավման հիման վրա, բանվորների ու գյուղացիների, որոնք աշխատում են իրենց համար, իրենց սքանչելի հայրենիքի բարօրության համար: Ստախանովյան հզոր շարժումն ապահովում է աշխատանքի բարձր արտադրողականություն և պայմաններ է նախապատրաստում սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար: Ստախանովականները չտեսնված հաջողություններ են ձեռք բերել գյուղատնտեսական արտադրության բոլոր ճյուղերում՝ մեքենաների տեխնիկայի օգտագործման բնագավառում, երկրագործության ու անասնապահության մեջ:

Ես ուզում եմ բերել մի քանի օրինակներ, որոնք ցույց են տալիս աշխատանքի բացառիկ բարձր, չտեսնված արտադրողականություն մեքենայական տեխնիկայի օգտագործման բնագավառում:

Ահա ստախանովական—կոմբայնավար, շքանշանակիր եղբայրներ Ալեքսանդր և Արխիպ Ոսկինները (Չկալովի մարզ): Նրանք 1938 թվի սեզոնի ընթացքում «Ստալինեց» երկու կոմբայնով հավաքել են 5238 հեկտար: Միջին հաշվով օրական նրանք կատարել են 124 հեկտար. առանձին օրերում նրանց արտադրանքը կազմել է 140,170,172 հեկտար, այն ժամանակ երբ արտադրանքի նորման 24 հեկտար է եղել: Կոմբայնով բերքահավաքի այդ աչքի ընկնող ռեկորդի առթիվ ընկեր Անդրեևը ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում ասել է. «Իսկ եթե համեմատենք, թե որքան ձի և մարդ կպահանջվեր բերքահավաքի համար, ապա պարզվում է, որ Ոսկինները երկու կոմբայնով կատարած իրենց աշխատանքով փոխարինել են 1637 մարդու, 373 ձիու, 25 հնձիչի, 24 կալսիչի, 25 քամհարի, 40 սորտավորիչի, իսկ ձեռքով բերքահավաք կատարելու ժամանակ, ինչպես այդ արվում էր առաջ, դրա համար կպահանջվեր 3323 մարդ: Ահա տեսնում եք, թե ինչպիսի հրաշքներ են գործում տեխնիկային տիրապետած մարդիկ»:

Ոսկին եղբայրներն իրենց աշխատանքում մեծ ուշադրություն էին դարձնում իրենց ագրեգատի մարդկանց ընտրությանը, նախապատրաստությանը և դասավորությանը: Անխա-

վիան աշխատելու համար նրանք իրենց մեքենաների կոնստրուկցիայի մեջ մտցրել են մի ամբողջ շարք բարելավումներ, սահմանել են աշխատանքի հերթափոխումների և տեխնիկական խնամք կատարելու պարզորոշ գրաֆիկ, ուշի ուշով ուսումնասիրել են բոլոր դաշտերը և կազմել մանրամասն պլան-մարշրուտ, դաշտերի բերքահավաքման հաջորդականությունը և նրանց բաժանումը գոտիների: Ներկայումս Ռսկին յեղբայրները սիստեմատիկ կերպով բարձրացնում են իրենց տեխնիկական, հանրակրթական և քաղաքական մակարդակը:

«Գիգանտ» խորհտնտեսության տրակտորային բրիգադիրը 1937 թվին հասել է ռեկորդային միջին արտադրանքի՝ ՉՏԶ մեկ տրակտորով 6402 հեկտար: Շքանշանակիր Ա. Ցե. Վոլոշինը 1937 թվին ՍՏԶ տրակտորով տվել է 2229 հեկտար ռեկորդային արտադրանք:

Կոմբայնավար Ս. Վ. Պոլագուտինը 1936 թվին «Ստալինեց» կոմբայնների կցվածքով հավաքել է 3157 հեկտար բերք: Շքանշանակիր Ֆ. Վ. Մալիկովը 1936 թվին «Ստալինեց» յերկու կոմբայնի կցվածքով մի սեզոնում հասել է 3247 հեկտար արտադրանքի: Շքանշանակիր Կոնստանտին Բորինը 1937 թվին յերկու կոմբայնի կցվածքով հավաքել է 3236 հեկտար և կալսել է 35.600 ցենտներ հացահատիկ, «Ստալինեց» յերկու կոմբայնի կցվածքով սահմանելով ռեկորդային օրական արտադրանք՝ 175 հեկտար:

Շքանշանակիր Յարուկ Զայնետդինովի բրիգադը (Կույբիշևի մարզ) 1937—1938 թվերին ՉՏԶ տրակտորով կատարել է 3108 հեկտար և խնայել է 4047 կլգր. վառելանյութ: Շքանշանակիր Պ. Ա. Կարպովի բրիգադը (Սարատովի մարզ) 1937 թվին յուրաքանչյուր ՉՏԶ տրակտորով մշակել է միջին հաշվով 2522 հեկտար:

Ստախանովյան շարժումը համաժողովրդական շարժում է դարձել: Գյուղատնտեսության մեջ. ստախանովյան շարժման նախաձեռնողների՝ Մարիա Դեմչենկոյի, Մարիա Գնատենկոյի, Պաշա Անգելինայի, Պաշա Կովարդակի փայլուն օրինակը, վոր նրանց պսակեց անթառամ փառքով, գրավեց կոլտնտեսային գյուղի հարյուր հազարավոր աշխատավորների: Ստախանովյան շարժումը, վոր ծնվել է խորհրդային հզոր ժողովրդի ընդերքում, այժմ լայն ծավալ է ստացել: Այդ շարժումը, վոր ըստ ընկեր Ստալինի արտահայտության «... մեր ժամանակի ամենակենսունակ և անհաղթահարելի շարժում է», գրավել է միլիոնավոր աշխատավորների, առաջ քաշելով նրանց կոմունիզմի նոր հաղթանակների համար մղվող պայքարի անխոնջ մարտիկների շարքերի մեջ:



## ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՊԱՅՔԱՐ ՅԵՐԱՇՏԻ ԴԵՄ

Գյուղատնտեսության ստախանովականները, վոր ազատ են ռուտինայից և քարացածությունից, համարձակորեն ջարդելով ագրոտեխնիկական հին նորմաներն ու կանոնները, չորային շրջաններում նոր ձևով են դնում յերկրագործության մի շարք հարցերը: Մինչ հեղափոխությունը յերաշտը գյուղատնտեսության պատուհասն եր և սովորաբար նրան ուղեկցում եյին բնակչության ամենաաղքատ մասի քայքայումը, սովն ու մահաջնջումը: Միայն խորհրդային իշխանության որոք լայն պայքար ծավալվեց յերաշտի դեմ, մտցնելով հողի ճիշտ մշակում, ձյունապահպանում, անտառաշերտերի տնկում և վոռոգում:

Բերենք մի քանի թվեր, վորոնք բնորոշում են բարձր բերքի վարպետների նվաճումները չորային մարզերում: ԽՍՀՄ-ում մեծ հռչակ վայելող Վ. Գ. Ոլեյնիկովը (Ստալինգրադի մարզ) 1938 թ. չորային տարում, վոռոգումը ճիշտ կազմակերպելու և նորագույն ագրոտեխնիկա մտցնելու շնորհիվ, 17 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից կարողացել է ստանալ 73 ցենտներ գարնանացան ցորենի բերք:

Չկալովի մարզի «Պոխոդ» կոլտնտեսության ողակավար Ֆ. Վ. Կոնդրատենկովան ամեն 1 հեկտարից ստացել է միջին հաշվով 58-ական ցենտներ կորեկ:

Մոսկվայի մարզում Իլյիչի հիշատակի 6-րդ տարեդարձի անվան կոլտնտեսությունը գործադրելով անձրևացում և յերկար ակոսներով վոռոգում, ձեռք է բերել հեկտարից 356 ցենտներ վարունգ, 200 ցենտներ կաղամբ, 230 ցենտներ կարտոֆիլ: Շքանշանակիր բրիգադիր Ն. Ա. Միլլիոնիկովը, Մոսկվայի մարզի Բուդյոննու անվան կոլտնտեսությունից, վոռոգելով հոսող հավաքաջրով, հեկտարից ստացել է 420 ցենտներ կարտոֆիլ, 450 ցենտներ կաղամբ: Շքանշանակիր Բ. Ի. Կուրսանովը (Սարատովի մարզ) կարողացել է մեկ հեկտարի ցորենի բերքը հասցնել մինչև 45 ցենտների: Կույբիշևի մարզի «Կրասնիյե կլյուչի» կոլտնտեսությունը, կիրառելով առաջավոր ագրոտեխնիկա՝ խոզանի յերեսավար, վաղ ցրտավար, մաքուր ցել, խոր

հերկ, միաժամանակ պարարտանյութեր մտցնելով, դաշտապատնեշներ ցանելով, հասել է դաշտային կուլտուրաների բարձր բերքատվության: Միջին հաշվով յերկու տարվա ընթացքում (1937—1938) կոլտնտեսություններում աշնանացան տարեկանի բերքը կազմում եր 1 հեկտարից 16,1 ցենտներ, աշնանացան ցորենինը՝ 15,7 ցենտներ, գարնանացան ցորենինը՝ 14,8 ցենտներ, գարու բերքը՝ 19,5 ցենտներ, վարսակինը՝ 20,2 ցենտներ:

Յերաշտի դեմ մի քանի տարի առաջ սկսած արշավն ամենևին դեռ չի ավարտված: Տարերքի դեմ խոշոր կռիվները դեռ քիչ չեն առաջիկայում: Բայց սոցիալիստական յերկրագործության առաջին հաջողությունները չորային մարզերում արդեն իսկ և Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսն այդ մասին շատ ապացույցներ է տալիս: «Պովոլժյե» պավիլիոնում Կույբիշևի, Սարատովի, Ստալինգրադի, Չկալովի մարզերի, ինչպես նաև յերեք ավտոնոմ հանրապետությունների՝ Մորդովական, Պովոլժյեյի Գերմանացիների և Կալմիկական, կոլտնտեսությունները, մեքենատրակտորային կայաններն ու խորհտնտեսությունները փայլուն կերպով ցուցադրում են իրենց առաջին հաջողությունները, վոր ձեռք են բերել յերաշտի դեմ մղվող պայքարում: Նշված մարզերի յուրաքանչյուր հարյուր կոլտնտեսությունից յոթ-ութը 1939 թ. Ցուցահանդեսին մասնակցողներ են: Այդ նշանակում է, վոր նրանք վերջին յերկու տարում 1 հեկտարից հավաքել են 9—11 ցենտներից վոչ պակաս հացահատիկ: Այդպիսի բերք յերբեք չեն տեսել և չեյին կարող տեսնել մինչհեղափոխական Պովոլժյեյի մենատնտես գյուղացիները: Հողային սովի ճիրաններում սեղմված, տեխնիկապես անզեն, քաղաքականապես իրավազուրկ՝ նրանք անզոր եյին տարերքի դեմ պայքարելու գործում:

ԽՍՀՄ-ում յերաշտի դեմ հարձակումը տարվում է ամբողջ ճակատով, բոլոր ուղղություններով: Առաջավոր ագրոտեխնիկան, խոտադաշտային ցանքաշրջանառությունը՝ այս հարձակման մեկ ուղին է: Առաջավոր ագրոտեխնիկայի նշանակությունը յերաշտի դեմ պայքարելու գործում հանրածանոթ է: Դաշտապաշտպան անտառաշերտերը նույնպես հանդիսանում են յերաշտի դեմ պայքարելու կարևորագույն ագրոտեխնիկական միջոցառումներից մեկը՝ գյուղատնտեսական կուլտուրաների կայուն բերք ստանալու համար:



Ցուցահանդեսի «Ագրոլեսոմելիորացիա» հատուկ պավիլիոնում ցույց է տրված անտառատնկման ուղղությամբ կատարված աշխատանքների ծավալը: ԽՍՀՄ-ում ստալինյան յերկու հնգամյակների ընթացքում տնկված են 292.450 հեկտար դաշտապաշտպան անտառաշերտեր. ցարական Ռուսաստանում տնկվել եր ընդամենը 11000 հեկտար, այսինքն՝ 26 անգամ ավելի պակաս: Դաշտային կուլտուրաների բերքատվության վրա պաշտպանող անտառաշերտերի ունեցած ազդեցության մասին խոսում են այն փորձակայանների տվյալները, վորոնք տեղավորված են չորային մարզերում: Կույբիշևի մարզի Տիմաշևսկի հենակետի տվյալներով 1933 թվից մինչև 1939 թիվն ընկած ժամանակամիջոցում տարեկան մեկ հեկտարից միջին հաշվով վերցված է գարնանացան ցորեն.

Անտառաշերտերի պաշտպանության տակ . . . 14,6 ցենտ.

Անտառաշերտերի ազդեցությունից դուրս՝
բաց տափաստանում . . . . . . . . . . 10,3 ցենտ.:

Վորոնեժի մարզի Կամեննոստեպնոյ փորձակայանում 1914 թվից մինչև 1930 թիվն ընկած ժամանակամիջոցում տարեկանի (աշորայի) միջին տարեկան բերքը կազմել է.

Անտառաշերտերի պաշտպանության տակ . . 15 ցենտ.

Բաց տափաստանում . . . . . . . . . . 12,7 ».

Անտառաշերտերի ազդեցությունը բերքի վրա առանձնապես ուժեղ է յեղել խիստ չորոյին 1921 թվին: Այդ տարում անտառաշերտերի պաշտպանության տակ տարեկանի բերքը 1 հեկտարից յեղել է 8,69 ցենտներ, բաց տափաստանում՝ միայն 2,17 ցենտներ:

Յերաշտի վրա բացահայտ հարձակվելու մյուս ուղին, վորը սերտ կերպով միահյուսվում է առաջավոր ագրոտեխնիկայի ձևերի հետ, արհեստական վոռոգման ուղին է: Այդ ուղղությամբ շատ բան է արված, բայց է՛լ ավելի շատ աշխատանք կա այսուհետև: Հատկապես հիշելով ընկեր Լենինի խոսքերն այն մասին, վոր «վոռոգումն ամենից ավելի հարկավոր է և ամենից ավելի կվերստեղծի յերկիրը, կվերածնի այն, կըթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ», կուսակցությունն ու կառավարությունը հսկայական աշխատանք են կատարել հին ավերված ջրանցքները վերականգնելու և նոր հըզոր վոռոգման կառուցումներ կատարելու ուղղությամբ: Մեր անծայրածիր Միության բոլոր չորային յերկրներում և մարզ-

րում հսկայական աշխատանք է կատարվում նոր հողերի յուրացման ու վոռոգման ուղղությամբ։ Բայց առանձին հետաքրքրություն են ներկայացնում Կույբիշևյան հիդրոհանգույցի կառուցման, Վոլգայի և Ոկայի ռեկոնստրուկցիայի վերաբերյալ նյութերը։ Կույբիշևյան հիդրոհանգույցը մեր եպոխայի խոշորագույն կառուցումն է։ Իր մասշտաբով, նպատակներով ու խնդիրներով նա իր հավասարը չունի աշխարհում։ Այդ կառուցումով կործանիչ հարված կտրվի յերաշտին հսկայական տարածությունների վրա։

Այդ բոլորի հետ միասին մեծ նշանակություն է ստանում տեղական վոռոգման ռեսուրսների ոգտագործումը։ Ջրովի յերկրագործության վարպետների փորձը, վոր ցուցադրված է «Ջեռնո» պավիլիոնում, խոսում է այն մասին, վոր հարավ-արևելքի ամեն մի կոլտնտեսությունում վոռոգման նպատակի համար կարելի յե ոգտագործել տեղական ջրահավաքը։ Միայն անհրաժեշտ են նախաձեռնություն, հաստատակամություն և ցանկություն։ Ջրամբարներ, մանավանդ Հայկական ՍՍՀ-ում, կարելի յե կառուցել ամենուրեք։ Իսկ ջրամբարների առկայությունը տեղական ջրահավաքումով վոռոգում կազմակերպելու համար գլխավորն է։

Շատ հետաքրքիր են Մոսկվայի մարզի կոլտնտեսությունների նվաճումներն անձրևացումով վոռոգելու ուղղությամբ։ Վոռոգումը կատարվում է ԿԴՈՒ (КДУ) հատուկ սարքավորումով։

«ԿԴՈՒ» վոռոգիչ սարքավորումն ունի հետևյալ ցուցանիշները։ Որական ջրում է 3—4 հեկտար։ Ջրի ծախսումը 1 ժամում 60 խոր. մետր է։ Շարժիչի հզորությունը 15—20 ձիու ուժ է։ Բանվորական ուժի ծախսն է՝ 1 հեկտարին 1,5—2 մարդ։ «ԿԴՈՒ» սարքավորման արժեքը մեկ հեկտարի համար հավասար է 1200—1500 ռուբ.։ «ԿԴՈՒ» վոռոգիչ սարքավորումը պետք է լայն գործածություն գտնի նաև Հայկական ՍՍՀ-ի չորային շրջաններում։

## ՅԵՖՐԵՄՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ՅԵՖՐԵՄՈՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ստախանովյան ագրոտեխնիկայի տարբերիչ առանձնահատկությունն այն է, վոր ստախանովականները բարձր բերքի հասնում են վոչ թե վորևէ մեկ ագրոտեխնիկական յեղանակով, կամ մի քանի իրարից անջատ յեղանակներով, այլ նրանք իրենց



հողամասերի վրա կիրառում են մի ամբողջ կոմպլեքս ագրոձեռնարկումներ, վորոնք նպաստում են բույսերի հաջող աճմանն ու զարգացմանը։ Ստախանովականները, գործադրելով զանազան մեթոդներ, ապահովում են բույսերի վրա ագրոտեխնիկական ներգործման անընդհատությունը նրանց աճման ամբողջ ժամանակաշրջանում։

Ակադեմիկ Վ. Ռ. Վիլյամսն ասել է. «սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության հիմքը կազմում են պրոգրեսիվ զարգացման որենքները։ Իսկ պրոգրեսիվ զարգացումն այն ժամանակ է հնարավոր, յերբ մեր ներգործությունն այն պայմանների վրա, վորոնց մեջ ընթանում է արտադրական պրոցեսը, ուղղված է միաժամանակ ամբողջ բարդ կոմպլեքսի վրա, վորը ներկայացնում է անխզելի ու փոխադարձաբար կապված մի որգանական ամբողջություն։ Արտադրության տարրերից մեկի վրա ներգործելն անխուսափելիորեն իր հետևից բերում է մնացած բոլորի վրա ներգործելու անհրաժեշտություն։ Այդ անհրաժեշտության մոռացումը խախտում է բերքի բարձրացման կայուն պայմանները»։ Յերկրագործության ստախանովականները գործնականորեն հաստատում են խորհրդային ականավոր գիտնականի տեսական ընդհանրացման խոր արդարացիությունը։

Ամբողջ ասվածի լուսաբանության ներքո սոցիալիստական յերկրագործության առաջավորների աշխատանքի մեթոդների ուսումնասիրությունը, իսկ նրանց մեջ առաջին հերթին յեֆրեմովականների աշխատանքի ուսումնասիրությունը, մեզ համար առանձնապես կարևոր նշանակություն է ստանում։

Կլիմենտ Արկադյևիչ Տիմիրյազևն ասել է, վոր ամբողջ մարդկության շնորհակալությանն է արժանի այն մարդը, վորը յերկու հասկ է աճեցրել այնտեղ, ուր մեկն եր աճում։ Ռուս մեծ գիտնականի այդ յերազանքի իրականացումը բաժին ընկավ ստախանովական յեֆրեմովականներին, վորոնք ցույց տվին, թե ինչպիսի հեքիաթային բերք կարող են տալ կոլտնտեսային դաշտերը նույնիսկ Սիբիրի ամենադաժան պայմաններում։

Յեֆրեմովական շարժումը ծնունդ է առել Սիբիրում, Ալտայան յերկրի Բելոգլազովսկի ռայոնում։ Ալտայի տափաստաններում յերկրագործության պայմաններն ավելի վատ են, քան Ուկրաինայի տափաստանային ռայոններում։ Բաց տեղ է, անտառազուրկ տափաստան։ Հողերը դեգրադացած սևահող են,

տեղ–տեղ աղուտներ: Ձմեռվա ձյունաբքերին փոխարինում են ամառային խիստ չոր քամիները, վորոնք բարձրացնում են մանրը ավազի ու փոշու ամպեր և փոչնչացնում ցանքերի մեծ մասսիվներ: Տեղումներ քիչ են լինում, յերաշտը հաճախակի յերեվույթ ե:

Ընդհանուր մինչև 1936 թիվը հացահատիկների միջին բերքատվությունը շրջանում կազմում եր 1 հեկտարից 3–4 ցենտներ: Մինչև այդ ժամանակ կիրառվող ցածր ագրոտեխնիկան անզոր եր յերաշտի դեմ: Առանց ագրոտեխնիկայի արմատական փոփոխության՝ հիմք չկար մտածելու բարձր ու կայուն բերքի մասին: Այդ յեզրակացությանը յեկավ նաև Բելոգլազովսկի ռայոնի կուսակցական կազմակերպությունը: Կուսկազմակերպությունը, վոր հիմնականում կազմված եր նախկին քաղբաժինականներից, հայտնաբերեց ու դաստիարակեց կոլտնտեսականներից մի շարք ականավոր մարդկանց, վորոնք համոզված՝ յեղանակի ինչ պայմաններում ել լինի, հասնել բարձր բերքատվության: Այդ ամբողջ աշխատանքի հոգին եր ՀամԿ(բ)Կ Բելոգլազովսկի ռայկոմի նախկին քարտուղարը, Հացահատիկային տնտեսության Սիբիրական գիտա–հետազոտական ինստիտուտի այժմյան գիտական աշխատող ընկ. Յա. Ֆ. Լուկյանենկոն, վորը գլխավորում և հմտորեն ղեկավարում եր բարձր բերքի համար մղվող պայքարը:

Ի պատասխան ընկեր Ստալինի կոչին՝ տարեկան 7—8 միլիարդ փութ հացահատիկի արտադրության մասին, Միխայիլ Յեֆրեմովիչ Յեֆրեմովը և Իվան Յեֆրեմովիչ Զումանովը առաջիններն եյին, վոր պրակտիկորեն ապացուցեցին ցորենի ռեկորդային բերք ստանալու հնարավորությունը: Յեֆրեմովի ողակը (Բելոգլազովսկի ռայոնի «Իսկրա» կոլտնտեսություն) 1936 թ. առաջին անգամ գարնանացան ցորենի հետևյալ բերքն ե ստացել՝ 4 հեկտարից 60,9–ական ցենտներ, 3 հեկտարից 52,6–ական ցենտներ, 5 հեկտարից 46,6–ական ցենտներ իսկ մնացած 17 հեկտարից 25–ական ցենտներ: Ողակին ամրացված ամբողջ հողամասից միջին բերքատվությունը կազմել ե 35 ցենտներ մեկ հեկտարից:

Այսպիսին ե ողակավար Յեֆրեմովի աշխատանքի արդյունքը, վորը հանդիսանում ե հացահատիկների բարձր բերքի համար մղվող պայքարի նախաձեռնողը: Այդ պատճառով ել պատահական չե, վոր ինչպես Սիբիրում, այնպես ել ՌՍՀՄ–ի այլ



մարզերում բարձր բերքատվության համար կազմակերպված ողակներն սկսեցին կոչվել յեֆրեմովյան ողակներ:

Նույն 1936 թվին «Մոլոդայա գվարդիա» կոլտնտեսության խրճիթ–լաբորատորիայի վարիչ ընկ. Զումանովը 1 հեկտար հողամասից հավաքել ե 50,4 ցենտներ ցորեն, մինչդեռ հարևան հողամասում սովորական ցանքի ու խնամքի պայմաններում ստացվել ե ընդամենը 8 ցենտներ:

Յեֆրեմովի և Զումանովի հաղթանակի լուրն արագորեն տարածվեց յերկրամասի կոլտնտեսություններում: Մեկը մյուսի հետևից կոլտնտեսականների պատգամավորություններ սկսեցին գալ Բելոգլազովսկի ռայոնը: Այդ ռայոնը դարձավ յուրահատուկ ուխտագնացության մի վայր: Ըստ հաշվումների՝ 1936 թվի աշնան և 1937 թվի առաջին կեսի ընթացքում Յեֆրեմովին և Զումանովին այցելել են 700 կոլտնտեսական, հաճախ շատ հեռու յերկրամասերից ու ռայոններից յեկած:

Հաջորդ տարին արդեն Բելոգլազովսկի ռայոնի բազմաթիվ տասնյակներով ողակներ հասան ավելի ևս մեծ հաջողությունների: Ամենաբարձր ռեկորդային բերքը հասավ մինչև 85,9 ցենտների: Ի. Յե. Զումանովը հեկտարից հավաքեց 85,9 ցենտներ գարնանացան ցորեն (հեկտարից 512 փութ): Ցորենի այդ չտեսնված բերքը համաշխարհային ռեկորդ ե հանդիսանում: Ֆ. Ն. Ռակիտինը («Նովի Զարիչ» կոլտնտեսություն) հեկտարից հավաքել ե 79,08 ցենտներ: Մ. Գ. Գլեստվսկիխը («Գոբեդա» արտել)՝ 78 ցենտներ, Ա. Լ. Մակարովան՝ 71,8 ցենտներ 1 հեկտար հողամասից և 23 հեկտար հողամասից 63,8–ական ցենտներ (Վորոշիլովի անվան կոլտնտեսություն) և Մ. Յե. Յեֆրեմովը՝ 32–ական ցենտներ 8 հեկտար հողամասից:

Յեֆրեմովյան ագրոտեխնիկայի ճշտության նոր ապացույցներ բերեց 1938 թիվը: Սլավգորոդսկի ռայոնի «Կրասնի պարտիզան» կոլտնտեսության ողակավար Գ. Ո. Գալենկոն 1 հեկտարից ստացել ե 75 ցենտներ գարնանացան ցորենի բերք, իսկ 15 հեկտարից 58–ական ցենտներ: Անդրեյեվսկի ռայոնի Քաղբաժնի անվան կոլտնտեսության ողակավար Ա. Ս. Սերգեյեվան 4 հեկտար հողամասից ստացել ե 72–ական ցենտներ, իսկ 10 հեկտար հողամասից՝ 53,8 ցենտներ յուրաքանչյուր հեկտարից և այլն, և այլն:

Յեֆրեմովյան շարժումը տարեց տարի աճում ե: Այդ ա–

տեղ-տեղ աղուտներ: Ձմեռվա ձյունաբքերին փոխարինում են ամառային խիստ չոր քամիները, վորոնք բարձրացնում են մանրը ավազի ու փոշու ամպեր և վոչնչացնում ցանքերի մեծ մասիվներ: Տեղումներ քիչ են լինում, յերաշտը հաճախակի յերևույթ է:

Ընդհուպ մինչև 1936 թիվը հացահատիկների միջին բերքատվությունը շրջանում կազմում եր 1 հեկտարից 3-4 ցենտներ: Մինչև այդ ժամանակ կիրառվող ցած ագրոտեխնիկան անզոր եր յերաշտի դեմ: Առանց ագրոտեխնիկայի արմատական փոփոխության՝ հիմք չկար մտածելու բարձր ու կայուն բերքի մասին: Այդ յեզրակացությանը յեկավ նաև Բելոգլազովսկի ռայոնի կուսակցական կազմակերպությունը: Կուսկազմակերպությունը, վոր հիմնականում կազմված եր նախկին քաղբաժինականներից, հայտնաբերեց ու դաստիարակեց կոլտնտեսականներից մի շարք ականավոր մարդկանց, վորոնք հանձն առան՝ յեղանակի ինչ պայմաններում ել լինի, հասնել բարձր բերքատվության: Այդ ամբողջ աշխատանքի հոգին եր ՀամԿ(բ)Կ Բելոգլազովսկի ռայկոմի նախկին քարտուղարը, Հացահատիկային տնտեսության Սիբիրական գիտա-հետազոտական ինստիտուտի այժմյան գիտական աշխատող ընկ. Յա. Ֆ. Լուկյանենկոն, վորը գլխավորում և հմտորեն ղեկավարում եր բարձր բերքի համար մղվող պայքարը:

Ի պատասխան ընկեր Ստալինի կոչին՝ տարեկան 7—8 միլիարդ փութ հացահատիկի արտադրության մասին, Միխայիլ Ցեֆրեմովիչ Ցեֆրեմովը և Իվան Ցեֆրեմովիչ Զումանովը առաջիններն եյին, վոր պրակտիկորեն ապացուցեցին ցորենի ռեկորդային բերք ստանալու հնարավորությունը: Ցեֆրեմովի ողակը (Բելոգլազովսկի ռայոնի «Իսկրա» կոլտնտեսություն) 1936 թ. առաջին անգամ գարնանացան ցորենի հետևյալ բերքն է ստացել՝ 4 հեկտարից 60,9-ական ցենտներ, 3 հեկտարից 52,6-ական ցենտներ, 5 հեկտարից 46,6-ական ցենտներ իսկ մնացած 17 հեկտարից 25-ական ցենտներ: Ողակին ամրացված ամբողջ հողամասից միջին բերքատվությունը կազմել է 35 ցենտներ մեկ հեկտարից:

Այսպիսին է ողակավար Ցեֆրեմովի աշխատանքի արդյունքը, վորը հանդիսանում է հացահատիկների բարձր բերքի համար մղվող պայքարի նախաձեռնողը: Այդ պատճառով ել պատահական չե, վոր ինչպես Սիբիրում, այնպես ել ԽՍՀՄ-ի այլ



մարզերում բարձր բերքատվության համար կազմակերպված ողակներն սկսեցին կոչվել ցեֆրեմովյան ողակներ:

Նույն 1936 թվին «Մոլոդայա գվարդիա» կոլտնտեսության խրճիթ-լաբորատորիայի վարիչ ընկ. Զումանովը 1 հեկտար հողամասից հավաքել է 50,4 ցենտներ ցորեն, մինչդեռ հարևան հողամասում սովորական ցանքի ու խնամքի պայմաններում ստացվել է ընդամենը 8 ցենտներ:

Ցեֆրեմովի և Զումանովի հաղթանակի լուրն արագորեն տարածվեց յերկրամասի կոլտնտեսություններում: Մեկը մյուսի հետևից կոլտնտեսականների պատգամավորություններ սկսեցին գալ Բելոգլազովսկի ռայոնը: Այդ ռայոնը դարձավ յուրահատուկ ուխտագնացության մի վայր: Ըստ հաշվումների՝ 1936 թվի աշնան և 1937 թվի առաջին կեսի ընթացքում Ցեֆրեմովին և Զումանովին այցելել են 700 կոլտնտեսական, հաճախ շատ հեռու յերկրամասերից ու ռայոններից յեկած:

Հաջորդ տարին արդեն Բելոգլազովսկի ռայոնի բազմաթիվ տասնյակներով ողակներ հասան ավելի ևս մեծ հաջողությունների: Ամենաբարձր ռեկորդային բերքը հասավ մինչև 85,9 ցենտների: Ի. Ցե. Զումանովը հեկտարից հավաքեց 85,9 ցենտներ գարնանացան ցորեն (հեկտարից 512 փութ): Ցորենի այդ չտեսնված բերքը համաշխարհային ռեկորդ է հանդիսանում: Ի. Ն. Ռակիտինը («Նովի Զարիչ» կոլտնտեսություն) հեկտարից հավաքել է 79,08 ցենտներ: Մ. Պ. Պլեսովսկիխը («Պոբեդա» արտել)՝ 78 ցենտներ, Ա. Լ. Մակարովան՝ 71,8 ցենտներ 1 հեկտար հողամասից և 23 հեկտար հողամասից 63,8-ական ցենտներ (Վորոշիլովի անվան կոլտնտեսություն) և Մ. Ցե. Ցեֆրեմովը՝ 32-ական ցենտներ 8 հեկտար հողամասից:

Ցեֆրեմովյան ագրոտեխնիկայի ճշտության նոր ապացույցներ բերեց 1938 թիվը: Սլավգորոդսկի ռայոնի «Կրասնի պարտիզան» կոլտնտեսության ողակավար Պ. Ռ. Պապենկոն 1 հեկտարից ստացել է 75 ցենտներ գարնանացան ցորենի բերք, իսկ 15 հեկտարից 58-ական ցենտներ: Անդրեյեվսկի ռայոնի Քաղբաժնի անվան կոլտնտեսության ողակավար Ա. Ս. Սերգեյեվան 4 հեկտար հողամասից ստացել է 72-ական ցենտներ, իսկ 10 հեկտար հողամասից՝ 53,8 ցենտներ յուրաքանչյուր հեկտարից և այլն, և այլն:

Ցեֆրեմովյան շարժումը տարեց տարի աճում է: Այդ ա-

ծումն Ալթայան յերկրամասում կարելի յե բնորոշել ստախանովյան ողակների քանակով, վորոնք 1936 թվին կազմում էին 33, 1937 թվին՝ 500, 1938 թվին՝ 4294 օղակ։ Այդ օղակներում ու բրիգադներում բերքի համար մղվող պայքարը տարվում էր 68·760 հեկտար տարածության վրա։ Յերկրամասում կան 4600 կոլտնտեսություններ և համարյա այդքան էլ յեֆրեմովյան օղակներ։ Բարձր բերքատվության վոչ մի օղակ չունեցող կոլտնտեսություններն Ալթայան յերկրամասում հազվագյուտ են դարձել։

Իսկ ի՞նչն ապահովեց յեֆրեմովյան օղակների աշխատանքի հաջողությունը։ Նրանք ինչպիսի՞ ագրոտեխնիկա էին գործադրում։ Այդ հարցերը բացառիկ կարևորություն և հետաքրքրություն են ներկայացնում բոլոր կոլտնտեսականների և գյուղատնտեսական բոլոր մասնագետների համար՝ անկախ այն բանից, թե նրանք ինչ կուլտուրաներ են մշակում, վորովհետև յեֆրեմովականների գործադրած մի շարք յեղանակներն իրենց կիրառումը կգտնեն վոչ միայն հացահատիկային, այլև ընդհանրապես դաշտային տնտեսության մեջ։

Յեֆրեմովականների ագրոտեխնիկայի մանրամասն բնութագիրը մեզ շատ հեռու կտաներ, հատուկ նկարագրություն կպահանջեր, այդ պատճառով յես ինձ թույլ կտամ կանգ առնել միայն ամենից ավելի ընդհանուր մոմենտների վրա։

1. Բոլոր յեֆրեմովականներն ընդունում են հողի ստրուկտուրայի հսկայական դերը գյուղատնտեսական բույսերի լավագույն աճման համար։ Բավական է ասել, վոր յեֆրեմովյան 63 հողամասից 39-ը իրենցից ներկայացնում էին խոպան, 11-ը՝ խոպանի և տարբեր տարիքի խամի շրջված շերտ և միայն 13 հողամաս տեղավորված էին հնահերկ հողերի վրա։ Ամենալավ արդյունքները նրանք ստացել են լավ ստրուկտուրա ունեցող հողերի վրա։ Նրանց մասսայական փորձն ամբողջապես հաստատեց ակադեմիկ Վիլյամսի թեորիայի ճշտությունը, վոր անհրաժեշտ է ավելի համարձակորեն ու վճռականորեն մտցնել խոտադաշտային ցանքաշրջանառությունները, վորովհետև նրանց մեջն է բարձր ու կայուն բերքատվության բանալին։

2) Յեֆրեմովյան հողամասերում վարի խորությունը մինչև 25 սանտիմետր է, ընդվորում հիմնական վարը կատարվում է հունիսի սկզբին։ Հողը մշակելիս յեֆրեմովականները խիստ հետևում են, վոր մշակումը կատարվի բարձրորակ։



3) Յեֆրեմովականներն աշխատում են հողում ամբարել ու պահպանել հնարավորին չափ ավելի շատ ջուր։ Նրանք բոլորն էլ առանց բացառության կիրառում են ձյունապահում, կոմբինացված ձևով կիրառելով վահաններ և ձյունաթմբեր։ Նրանք ձյունապահումն այնքան հմտորեն են կատարում, վոր ձյունի շերտի հաստությունը հասնում է մեկ մետրի և ավելի. իսկ Զումանովին ու Յեֆրեմովին հաջողվել է պահել ձյունի մինչև 2 մետր հաստության հասնող շերտ։ Գարնանը յեֆրեմովականներն աշխատում են իրենց հողամասերում պահել ամբողջ հալոցքաջուրը, վորի համար նրանք շինում են պատվարներ, ջրի չափազանց կուտակման տեղերից սարքում են ջրատար առուներ ու ակոսներ։ Այդ աշխատանքը շատ ծանր է՝ ջրի մեջ, ցրտի մեջ, բայց և այնպես յեֆրեմովականներն այն կատարում են կոլտնտեսություններում։

Գարնանը, հենց վոր հողն սկսում է չորանալ, յեֆրեմովականները, վորպես պարտադիր միջոցառում, գործադրում են «ջրի նստեցում» («прибивка влаги»)։ Նրանք ջրի նստեցում են անվանում առաջին փոցխումը՝ նպատակ ունենալով հարթել դաշտի մակերեսը և ստեղծել փխրուն շերտ, վորը կանխում է ջրի գոլորշիացումը հողից։

4) Բույսերին ջրով ապահովելու հետ միասին յեֆրեմովականները ձգտում են բույսը դնել այնպիսի պայմանների մեջ, վոր նա սննդի պակասություն չունենա։ Նրանք լայն կերպով գործածում են տեղական և հանքային պարարտանյութեր (գոմաղբ, գոմաղբաջուր, ֆեկալներ, մոխիր, սուպերֆոսֆատ)։

5) Սերմերի ընտրությունը, ցանքի նորման հաշվելը և հենց ցանքը յեֆրեմովկանները վոչ վոքի չեն վստահում, այլ այդ աշխատանքն իրենք են կատարում։ Սերմերը զտում և սորտավորում են, իսկ հետո յերկու անգամ անցկացնում «տրիերի» միջով, վորպեսզի ջոկեն ամենախոշոր ֆրակցիան։ Յեֆրեմովականները բացառիկ մեծ ուշադրություն են դարձնում սերմերի բացարձակ կշռին։ Խոշոր, լիակշիռ սերմերը ջոկվում են այն պատճառով, վորովհետև նրանցից են ստացվում ամենից ավելի ուժեղ ծիլերը։

6) Շատ հետաքրքիր են յեֆրեմովականների հետևությունները ցանքի նորմաների վերաբերմամբ։ Մինչև այժմ գյուղատնտեսական պրակտիկան ճանաչում էր ցանքի միայն կշռային նորմաները։ Յեֆրեմովականներն առաջարկում են ցանքի նոր-

ման վորոշելու այլ մեթոդ, այն է՝ ըստ հատիկների քանակի տարածության մեկ միավորին (մեկ հեկտարի կամ քառ. մետրի վրա): Նրանք հետևյալ կերպ են դատում. որինակ՝ Հորդեյֆորմե 010 գարնանացան ցորենի ջոկովի սերմերի 1 կիլոգրամում կա 18 հազարից ավելի հատիկ, իսկ մի ուրիշ սորտի՝ Միլտուրում 0321-ի մեկ կիլոգրամում կա 30—32 հազար հատիկ: Արդյոք պարզ չէ՞, վոր ցորենի տարբեր սորտերի և ընդհանրապես ամեն տեսակի գյուղատնտեսական բույսերի համար չի կարելի միանման կշռային նորմաներ սահմանել (ինչպես այդ արվում է մինչև այժմ):

Յեֆրեմովականներն առաջարկել են ցանքի իրենց նորմաները: Նրանց մոտ այդ նորմաները հարմարեցված են ցանքի ձևին, հացահատիկի սորտին, հողամասի մշակման վորակին ու հողի պարարտացմանը և խնամքի վորակին: Որինակ՝ ցանելու ժամանակ ցորենի համար նորմաներն այնպիսի հաշվով են սահմանում, վոր յուրաքանչյուր քառակուսի մետրին ընկնի 500-600-700 ծլունակ հատիկ: Յեֆրեմովականների մոտ յուրաքանչյուր քառակուսի մետրի վրա աճում է 560-650-850 ցողուն սովորական ցանքի 350-400 ցողունի փոխարեն:

7) Ստրուկտուրային հողերի վրա յեֆրեմովականները կիրառում են խաչաձև ցանք, իսկ փոշիացած և մոլախոտոտ հողերի վրա՝ ժապավենաձև լայնաշարք ցանք: Նրանք բոլորն էլ ցանքը կատարում են յարովիզացրած հատիկով: Բացի վաղ փոցխումից, ցանքից առաջ կատարում են խոր, 10—12 սանտիմետր կուլտիվացիա, մեկ կամ յերկու յերես: Ցանքը կատարում են կուլտիվացիայից անմիջապես հետո:

8) Բացի մոլախոտերի սովորական քաղհանից, յեֆրեմովականները ցանքերի նկատմամբ գործադրում են խնամքի բոլորովին նոր սիստեմ: Հիմնականում դա ցանքերը փոցխելու և ոժանդակ սնունդ տալու մեջն է կայանում: Փոցխումը կատարում են հողի խոնավությունը պահպանելու համար, ինչպես նաև կեղևը վոչնչացնելու համար. փոցխումը դադարեցնում են այն ժամանակ, յերբ բույսերն իրենց տերևներով լիովին ծածկում են հողը: Ռեկորդային հողամասերի վրա կատարում են 2—3 փոցխում, այն է՝ ծիլերը դուրս գալուց հետո, թփակալումից առաջ և թփակալման շրջանում:

Ոժանդակ սնուցումը գործադրվում է վորպես պարտադիր միջոցառում, դրա համար գործածելով գոմաղբի ջուր, խմորված ֆեկալ մասսաների, թռչունի ծերտի, վոչխարի աղբի լուծույթը, սուպերֆոսֆատ, ամոնիում սուլֆատ և կալիումական աղ:

Ռեկորդային հողամասերի վրա ցանքերին ոժանդակ սնունդ տալիս են 2—3 անգամ այն է՝ ծիլերը դուրս գալու հետ, թփակալման ժամանակ և փողակ («լուլա») տալու սկզբում: Այդ ոժանդակ սնունդը սովորաբար տրվում է հեղուկի ձևով, հենց յեֆրեմովականների հնարած ապարատների՝ բուսասնուցիչների ոգնությամբ:

Այսպիսով՝ ինչպես մենք տեսնում ենք, յեֆրեմովականների հաջողությունների արդյունք են ագրոտեխնիկայի կոմպլեքսային կիրառման, ընդ վորում կոմպլեքսի հիմքն են հանդիսանում՝ հողի բարձրորակ մշակումը, սերմերի մանրակրկիտ ընտրությունն ու նախապատրաստումը, հողում ջուր կուտակելն ու տնտեսելը, տարածության վրա բույսերին հավասարաչափ և ճիշտ դասավորելը, բույսերին ուշադիր խնամելը և տեղական պարարտանյութեր գործածելը: Միաժամանակ այդ կոմպլեքսը չի հանդիսանում ագրոտեխնիկայի առանձնակի, պատահական ձևերի մեխանիկական միավորում, այլ իրենից ներկայացնում է փոխադարձաբար կապակցված միջոցառումների մի սիստեմ:

Վերցնենք թեկուզ մի այնպիսի միջոցառում, ինչպիսին է ցանքի նորման: Յեֆրեմովականները յերկու յերեք անգամ ավելացրել են ցանքի կշռային նորման, բայց այդ միջոցառումը նրանք գործադրել են խստիվ համապատասխանեցնելով ցանելու ձևերի, հացահատիկի սորտի, հողի մշակման վորակի և պարարտանյութերի հետ: Ցանքի սովորական ձևերի դեպքում ցանքի նորմաների այդպիսի բարձրացումն առաջ կբերեր առանձին բույսերի թերազարգացում:

Հասկանալի յե դառնում, թե ինչու փորձակայանները ցանքի նորմաները բարձրացնելու ուղղությամբ կատարած իրենց բազմամյա փորձերի ընթացքում բացասական արդյունք եյին ստանում. նրանք նորմաների բարձրացումը փորձում եյին առանց այն կապակցելու ուրիշ ագրոմիջոցառումների հետ: Յերկար տարիների ընթացքում փորձնական կայաններն ուսումնասիրում եյին վոչ թե միջոցառումների կոմպլեքսը, վոչ թե սիստեմը, այլ կուլտուրական բույսերի մշակման առանձին, միմյանց հետ չկապակցված յեղանակները: Յեֆրեմովականների աշխատանքը ցույց է տալիս, վոր անհրաժեշտ է վերակառուցել

գյուղատնտեսական փորձակայանների մեթոդիկան և թեմատիկ պլաններում նախատեսնել գյուղատնտեսական կուլտուրաների համար ագրոտեխնիկական միջոցառումների կոմպլեքսի մշակում:

Յեֆրեմովականների աշխատանքը հսկայական նշանակություն ունի մեր յերկրի ամբողջ գյուղատնտեսության համար: Նրանց փորձը պետք է հայտնի լինի բոլոր կոլտնտեսականներին և գյուղատնտեսության բոլոր մասնագետներին: Բարձր բերքի համար պայքարելու նրանց մեթոդները պետք է համարձակ ու վճռական կերպով մտցնել սոցիալիստական յերկրագործության պրակտիկայի մեջ:

## ԿԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ԲԵՐՔԸ

Գյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերք ստանալու գործում միայն յեֆրեմովականները չեն, վոր աչքի յեն ընկել: Մեր անծայրածիր Միության բոլոր մարզերում, յերկրամասերում և ռայոններում շատ կան ստալինյան բարձր բերքի համար մղվող պայքարի ստախանովականների, առաջավորների պանծալի անուններ: Վոչ մի հնարավորություն չկա թվելու այդ նվաճումները, ուստի մենք կբերենք որինակների միայն մի փոքրիկ շարք, վորոնք բնորոշում են այն բարձր բերքատվությունը, վորին հասել են դաշտերի ստախանովականները՝ կերի զանազան կուլտուրաներ մշակելիս:

Կոլտնտեսություններից շատ շատերը կերաբույսեր մշակելիս թե՛ սերմերի և թե՛ խոտի հիանալի բերք են ստացել: Կալինինի մարզի «Կրասնի ուդարնիկ» կոլտնտեսությունը հեկտարից ստացել է 4,3 ցենտներ շյուղախոտի սերմ: Հայկական ԽՍՀ-ի Թալինի ռայոնի «Պայքար» կոլտնտեսությունը հեկտարից ստացել է 11,3 ցենտներ հիանալի հատկություններով սխխանի կորնգանի սերմ: Բելոռուսական ԽՍՀ-ի «Ռեչիցա» խորհտնտեսությունը հեկտարից ստացել է 4,5 ցենտներ մարգագետնային տիմոֆեյեվկայի սերմ:



Վարսակի սերմերի բարձր բերք են ստացել՝

| Տնտեսության անունը | Վարսակի սորտը | Բերքը հեկտարից ցենտներներով |
|---|---|---|
| Շտոկովսկի ռայոն Հեռավոր Արևելք | «Զոլոտոյ դոժդ» | 14,0 |
| Սիբիր. գիտա-հետազոտական ինստիտուտ—Ոմսկի մարզ | «Աուերա» 06922 | 18,1 |
| Կալինինի անվան կոլտնտեսություն, Սիբիր | «Պոբեդա» | 25,3 |
| ՆԳԺԿ-ի անվան կոլտնտեսություն, Գերմի մարզ | «Զոլոտոյ դոժդ» | 36,0 |
| «Ֆրիցե Կրաֆտ» կոլտնտեսություն, Պովոլժ. Գերման. ԱԽՍՀ | «Ռյադովոյ» | 16,5 |

Ղրիմի ԱԽՍՀ «3-րդ հնգամյակ» կոլտնտեսությունն ստացել է Մինեզոտա յեղիպտացորենի հատիկ 18,3 ցենտներ: Հյուս. Ոսեթական ԱԽՍՀ «Պուտ սոցնանիա» կոլտնտեսությունն ստացել է յեղիպտացորենի հատիկ 37,5 ցենտներ:

Կերի կուլտուրաների բարձր բերքատվության է հասել Հացահատիկային տնտեսության Սիբիրական գիտա-հետազոտական ինստիտուտը (Ոմսկի մարզ), վորն ստացել է խոտի և սերմի հետևյալ բերքերը.

| Կուլտուրայի անունը | Խոտի բերքը 1 հեկտարից ցենտներներով | Սերմի բերքը 1 հեկտարից ցենտներներով |
|---|---|---|
| Անքիստ խրտցակ (բրոմուս) | 40,7 | 8,6 |
| Ամերիկական սեզ (շայիր) | 28,2 | 11,3 |
| Ցորնուկ | — | 6,3 |
| Հիբրիդային առվույտ | — | 2,7 |

Առվույտն ու կարմիր յերեքնուկը մեր Միության շատ ռայոններում հանդիսանում են կերային առաջատար կուլտուրաներ, և շատ տնտեսություններ այդ բույսերի նկատմամբ հասել են բարձր բերքի.

| Տնտեսության անունը | Ռայոնը և մարզը | Կուլտուրայի անունը | Խոտի բերքը 1 հեկտարից ցենտն. | Սերմի բերքը 1 հեկտարից ցենտներներով |
|---|---|---|---|---|
| «Նիվա» կոլտնտեսություն | Գորկու մարզ | Կարմիր յերեքնուկ | — | 5,0 |
| Մարտի 8-ի անվ. կոլտնտեսության | Պերմի մարզ | — « — | — | 3,0 |
| «Կոլոս» կոլտնտես. | Բելոռուս. մարզ | — « — | 45,0 | — |
| ՄՊՔՎ 15 ամյակի անվան կոլտնտեսություն | — « — | — « — | 51,9 | — |
| ՆԳԺԿ-ի անվան կոլտնտեսություն | Պերմի մարզ | — « — | 49,5 | — |
| «Պոբեդա Ուկրայաբրյա» կոլտնտ. | Լենինգրադի մարզ | — « — | — | 4,73 |
| — | Շաբալին.ռայոն | — « — | — | 5,35 |
| — | Լեբյաժսկ. ռայոն | — « — | — | 4,58 |
| Թելմանի անվան կոլտնտեսություն | Կարա-Կալպակ. ԱԽՍՀ | ցանովի առվույտ | — | 5,0 |
| 17-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսություն | Ռոստովի մարզ | — « — | — | 9,0 |
| «Ընկ. Ստալինի 50-ամյակը» կոլտնտեսություն | — « — | — « — | — | 5,77 |
| «Նադեժդա» կոլտնտեսություն | — « — | — « — | — | 7,0 |
| «Տրուդ» կոլտնտ. | — « — | — « — | — | 4,31 |
| Խորհ. Միության հերոս Ցեպորովի անվան կոլտնտ. | Կիրգիզիա | — « — | — | 4,67 |
| Սելեկցիոն կայան | Ադրբեջ. ԽՍՀ | Առվույտ № 2—30 | 110—120 | — |
| — « — | — « — | Առվույտ № 262 | 140 | 4,0 |
| Ստալինի անվան կոլտնտեսություն | Ուզբեկական ԽՍՀ | Ցանովի առվույտ | — | 5,87 |
| — | Շտոկովս. ռայոն | — « — | — | 2,0 |
| Կալինինի անվան կոլտնտեսություն | Սիբիր, Աբակ. ռայոն | Վայրի բուսնող տեղական առվույտ | 45—47 | — |



Մասնանշված բարձր բերքերն ստացված են ագրոտեխնիկական միջոցառումների բարձր փոն կիրառելու հետևանքով: Օրինակ՝ Կարա-Կալպակական ԱԽՍՀ, Չիմբայսկի ռայոնի Թելմանի անվան կոլտնտեսությունը, որ վերջին տարիներում հեկտարից ստանում է 5 ցենտներից ոչ պակաս առվույտի սերմի բերք, գործադրում է հետևյալ միջոցառումները՝ 1. տեղական պարարտանյութեր մտցնել, 2. անցյալ տարիների ցանքերը փոցխել, 3. ջրել և ժամանակին քաղհանել, 4. յերկու անգամ սրսկել ֆիտոնոմուսի դեմ, 5. բերքահավաքից առաջ սերմերի թափվելը նվազեցնելու համար խոնավացուցիչ ջրում կատարել. 6. սերմացուն հավաքել պատիճների 75 տոկոս հասունացման դեպքում:

Մի շարք նման միջոցառումներ կիրառելով՝ Բիրոբիջանի Գյուղատնտեսական փորձնական կայանն ստացել է հեկտարից ճահճային դաշտախոտ՝ 36,4 ցենտներ և հեկտարից ագրոխոտուկի (agrostis-ի) 41,6 ցենտներ խոտ: Նովոգորոդսկի ճահճային փորձնական հենակետը հեկտարից ստացել է 48,0 ցենտներ լիսոխվոստ խոտ և հեկտարից՝ 48,0 ցենտներ անքիստ խրոցակի (Bromus-ի) խոտ: Ագրոնոմ-սելեկցիոներ Դերժավինը (Ղրիմի ԱԽՍՀ) հեկտարից ստացել է 54,3 ցենտներ ժիտնյակի խոտ:

Մի շարք տնտեսություններ և գիտահետազոտական հիմնարկներ հասել են առաջնակարգ խոտի բարձր բերքատվության՝ ցանելով հասարակ խոտախառնուրդներ: Այսպես օրինակ՝ Նովգորոդսկի ճահճային փորձնական հենակետը յերեքնուկի+տիմոֆեյեվկայի խոտախառնուրդի մի հեկտարից ստացել է 48 ցենտներ խոտ:

Խալտուրինսկի ռայոնում (Լենինգրադի մարզ) կոլտնտեսականները, ցանելով տիմոֆեյեվկայի+լիսոխվոստ+շյուղախոտի խոտախառնուրդ, ստացել են հեկտարից 61,6 ցենտներ խոտ: Ագրոնոմ Դերժավինը, Ղրիմի յերաշտային ռայոններում ցանելով ժիտնյակի և դեղին առվույտի խառնուրդ, հեկտարից ստացել է 73,3 ցենտներ խոտ, իսկ ցորնուկի և հունգարական առվույտի հեկտարից՝ 75,6 ցենտներ խոտ:

Բացառիկ ցուցադրական են ԽՍՀՄ-ի Գիտությունների Ակադեմիայի Պամիրյան բիոլոգիական կայանի աշխատանքները. կայանը Պամիրում, ծովի մակերևույթից 3550 մետր բարձրության վրա հողա-կլիմայական ամենաաննպաստ պայմաններում, ցանելով առվույտի+անքիստ խրոցակի (բրոմուսի) խո-

տախառնուրդ, հեկտարից ստացել է 55,2 ցենտներ հիանալի խոտ:

Խիստ ցուցադրական են Խիբինում BMP-ի բևեռային փորձակայանի նվաճումները. այդ կայանը հեկտարից ստացել է սպիտակ ագրոստիսի (Agrostis-ի) 1,5 ցենտներ սերմ, լիսոխվոստի 1,1 ցենտներ սերմ, դաշտախոտի 1,5 ցենտներ սերմ, տիմոֆեյևկայի 2,5 ցենտներ սերմ և մարգագետնի շյուղախոտի 2,5 ցենտներ սերմ:

Այդ նույն կայանում հեկտարից ստացված է մարգագետնի շյուղախոտի 48 ցենտներ և սպիտակ հսկա ագրոստիսի 72 ցենտներ խոտ:

Այդ բոլոր նվաճումների ֆոնի վրա շատ հետաքրքիր են Հայկական ԽՍՀ-ում ձեռք բերված նվաճումները: Հայկական ԽՍՀ Կալինինոյի ռայոնի պայմաններում Անասնապահության հանրապետական փորձակայանը ֆրանսիական վորոմնախոտի (ռայգրասի) ցանքի մի հեկտարից, յերկու հունձ անելով, ստացել է 65 ցենտներ խոտ, անգլիական վորոմնախոտի (ռայգրասի) ցանքերի մի հեկտարից ստացել է 50,9 ցենտներ խոտ, կարմիր յերեքնուկի ցանքի մի հեկտարից, յերկու հունձ անելով, ստացել է 43,7 ցենտներ խոտ:

Ֆրանսիական վորոմնախոտի և կարմիր յերեքնուկի խոտախառնուրդի մի հեկտարից մեկ դեպքում ստացված է 68,3 ցենտներ, մյուս դեպքում՝ 77,9 ցենտներ խոտ: Կարմիր յերեքնուկի և տիմոֆեյևկայի խոտախառնուրդի հեկտարից ստացված է 63,7 ցենտներ խոտ: Ինչպես տեսնում ենք, բերքատվությունները ռեկորդային են և իրենց վրա ուշադրություն հրավիրող:

Ռեկորդային բացառիկ բարձր բերքատվության են հասել ԽՍՀՄ-ի շատ ու շատ ռայոններում արմատա-պալարապտուղների նկատմամբ: Կարտոֆիլի բարձր բերքի համար յեղած ստախանովյան շարժումը բռնել է ամբողջ յերկիրը: Խորհրդային Միության շատ հանրապետություններում և մարզերում կան մի շարք ստախանովականներ, վորոնք հասել են կարտոֆիլի ռեկորդային բարձր բերքի:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատ Ա. Ցե. Կարատաևյան, Նովոսիբիրսկի մարզի «Պուտ նովոյ ժիզնի» («Путь новой жизни») կոլտնտեսության ողակավարուհին, 1936 թվին հեկտարից ստացել է 512 ց., 1937 թվին՝ 904 ց. և 1938 թվին՝ 900 ց. կարտոֆիլի բերք:



2. Շքանշանակիր Մ. Ս. Խուդոլիտը, Ժիտոմիրի մարզի Պետրովսկու անվ. կոլտնտեսության ողակավարուհին, 1936 թվին հեկտարից ստացել է 512 ցենտներ, 1937 թվին՝ 885 ցենտներ և 1938 թվին՝ 746 ցենտներ կարտոֆիլի բերք:

3. Շքանշանակիր Ի. Ա. Միլինկովը՝ Մոսկվայի մարզի Բուդյոննու անվան կոլտնտեսության բրիգադիրը, 1936 թվին հեկտարից ստացել է 603 ցենտներ, 1937 թ.՝ 610 ցենտներ կարտոֆիլի բերք: Չնայած 1938 թվի չափազանց չորային պայմաններին՝ նա հեկտարից ստացել է 420 ցենտներ:

4. Կիևի մարզի Վասիլյեվի անվան կոլտնտեսության ողակավարուհի շքանշանակիր Պ. Կ. Դենիսենկոն 1938 թվին 5 հեկտար կարտոֆիլի ցանքի յուրաքանչյուր հեկտարից ստացել է 218,8 ցենտներ և մի հեկտարից՝ 597 ցենտներ բերք:

Շատ յերկրամասերում ու մարզերում այդպիսի օրինակներ շատ ու շատ կան: Այդպիսի բերք ձեռք է բերված բարձր ագրոտեխնիկայի կիրառմամբ, այն է՝ խոր վար, առողջ, ախտահանված, յարովիզացրած պալարներ ցանել, կարտոֆիլի ամառային տնկում կատարել, ցանքերին տալ ուժանդակ սնունդ և այլն:

Շատ ու շատ տնտեսություններ հասել են արմատապտուղների չափազանց բարձր բերքի: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մոսկվայի մարզի «Զուլկի-Սոկոլովո» խորհտնտեսության աշխատանքը: Այդ խորհտնտեսությունն արմատապտուղների բարձր բերքի համար մղվող պայքարի նախաձեռնողն է հանդիսանում: Արմատապտուղների բարձր բերք ստանալու շնորհիվ՝ անասուններին հյութալի կերեր մատակարարելու պրոբլեմը խորհտնտեսությունում լրիվին լուծված է: Խորհտնտեսության լավագույն ստախանովականները՝ Ա. Յա. Իգնատովան, Յե. Ֆ. Գամովան, Պ. Ա. Եպիֆանցևան հեկտարից ստացել են 1800 ցենտներ կերի ճակնդեղի բերք:

Մոսկվայի մարզի «Հոկտեմբերի 12 տարին» կոլտնտեսության բրիգադիր Պ. Ա. Սախարովն ամբողջ բրիգադում գազարի միջին բերքը հասցրել է հեկտարից 674 ցենտների, իսկ ռեկորդային հողամասում՝ հեկտարից 1020 ցենտների:

Զարմանալի հաջողությունների յե հասել Ղազախական ԽՍՀ-ում շաքարի ճակնդեղի կուլտուրան, վորը զարգացել է միայն ստալինյան յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում: Հանրապետության համարյա բոլոր հարավային ռայոններում

շաքարի ճակնդեղ ցանող կոլտնտեսությունները բարձր բերք են ստացել, իսկ ճակնդեղացանության ստախանովական Սամեն Ռուսենբերգենովը, Հարավ-Ղազախստանի Լենինի անվան կոլտնտեսությունից, շաքարի ճակնդեղի բերքատվության չգերազանցված համաշխարհային ռեկորդ սահմանեց, այն է՝ հեկտարից 1410 ցենտներ:

Կիրգիզիայի կոլտնտեսությունները նույնպես կարճ ժամանակամիջոցում հսկայական հաջողություններ են ձեռք բերել ճակնդեղացանության ասպարեզում. վերջին 3 տարիների ընթացքում Կիրգիզիան ճակնդեղի բերքատվության տեսակետից առաջին տեղն է բռնում ԽՍՀՄ-ում: Շաքարի ճակնդեղի բերքը 1938 թվին յեղել է մեկ հեկտարից 315,6 ցենտներ, իսկ 1937 թվին, վորը տեղումներով ավելի բարենպաստ տարի էր, յեղել է 338,3 ցենտներ: Խորհրդային Միության հերոս ընկ. Ֆեդորովի անվան կոլտնտեսությունը հեկտարից վերցրել է 509 ցենտներ շաքարի ճակնդեղ: Ավելի ևս աչքի ընկնող հաջողությունների յե հասել կոլտնտեսային աշխատանքի հերոսուհի Շախրբյուբյու Տեզիկբաևան, «III Ինտերնացիոնալ» կոլտնտեսության ողակավարուհին, վորը Կիրգիզիայում ճակնդեղի բարձր բերքի համար մղվող պայքարի գործում ստախանովյան շարժման նախաձեռնողն է: Ընկ. Տեզիկբաևան, մանրամասն ուսումնասիրելով Ուկրաինայի ճակնդեղացանության վարպետների փորձը, 1936 թվին հեկտարից ստացել է 1196 ցենտներ և 1937 թվին՝ 1116 ցենտներ ճակնդեղ: Զորային 38 թիվը շատ խիստ չազդեց պանծալի հազարականի աշխատանքի վրա. նա այս անգամ ևս իրեն ամրացված հողամասից ստացավ հազար ցենտներից ավելի ճակնդեղի բերք:

Ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում աճել են ճակնդեղի դաշտերի բազմաթիվ հիանալի առաջավորներ: Ճակնդեղի դաշտերի վրա ստախանովյան շարժման սկզբնավորող՝ 1935 թվին մեր յերկրում առաջին անգամ ճակնդեղի ամենաբարձր բերք տվող Մարիա Դեմչենկոյից և Վալիա Կոչեռայից անմիջապես հետո՝ բազմաթիվ են դառնում բացառիկ որինակելի աշխատանքի և ստացված արդյունքների որինակները: Այժմ արդեն վոչ թե յեզակի, այլ հազարավոր ողակներ իրենց հողամասերից ստանում են հեկտարից 500-600-1000 և ավելի ցենտներ ճակնդեղ: Բավական է ասել, վոր 1936 թվին ճակնդեղի բարձր բերք ստանալու համար մրցում եյին 120 հազար ողակներ, 1937 թվին՝ 150 հազար և 1939 թվին՝ մոտ 200 հազար ողակներ:



Ճակնդեղաբույծ ստախանովականները, ինչպես վոր յեֆրեմովականները, բույսերի զարգացմանը մոտենում են վորպես բույսի, հողա-կլիմայական պայմանների և ագրո-տեխնիկական ձևերի միջև տեղի ունեցող փոխազդեցության մի անընդհատ պրոցեսի, վորն արտահայտվում է ագրոտեխնիկական միջոցառումների կոմպլեքսի ճիշտ կառուցմամբ և դիֆերենցված մոտեցմամբ դեպի դաշտի յուրաքանչյուր հողամասը և նույնիսկ դեպի առանձին բույսերը նրանց վեգետացիայի բոլոր էտապներում:

ԽՍՀՄ-ի մեջ կերի նոր կուլտուրաներ մտցնելու ուղղությամբ հետաքրքիր են պրոֆ. Վ. Դ. Զնամենսկիի աշխատանքների արդյունքները: Ռոստովի մարզի չորային պայմաններում նա 1938 թ. 1 հեկտարից ստացել է 1085 ցենտներ կերի ձմերուկի բերք:

Հայաստանի չորային ռայոնների չափազանց չոր, կիսաանապատային կլիմայի պայմաններում Զոո-վետ ինստիտուտի կերահայթայթման ամբիոնի և Արմֆանի բուսաբանական այգու աշխատանքները ցույց տվին կերի ձմերուկի (հեկտարից 450 ցենտներից ավելի) և աֆրիկական կորեկի (հեկտ. 40 ցենտներից ավելի խոտ կամ 500 ցենտներ կանաչ մասսա) բարձր բերք ստանալու հնարավորությունը: Այդ յերկու բույսերը շատ հեռանկարային են Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի չորային շրջանների համար և նրանց վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել:

Բացառիկ մեծ հաջողությունների յե հասել սոցիալիստական յերկրագործությունը Ծայր Հյուսիսի պայմաններում՝ նրա դաժան կլիմայի և մշտական սառցապատման պայմաններում: Մինչև հեղափոխությունը Ծայր Հյուսիսի հողերը յերկրագործության համար անպետք եյին համարվում: 1913 թվին ցորենի մշակման սահմանը հազիվ հասնում եր մինչև 56-րդ զուգահեռը: ԽՍՀՄ-ում ցորենի դաշտերը յերևացել են 60-րդ զուգահեռականից այն կողմը: Ծայր Հյուսիսի ռայոններում կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները բարձր բերք են ստանում:

Մշտական սառցապատման շրջանում «Սեվերնիյ պախար» կոլտնտեսությունը Կրասնոյարսկի յերկրամասի Տուրու-

խանսկի ռայոնում, 1938 թվին հեկտարից ստացել է աշնանացան ցորենի բերք 20 և ավելի ցենտներ, գարու բերք՝ 19,5 ցենտներ: Յակուտական ԱՍՍՀ Մեչինո-Կանգալասի ռայոնի «Կրասնի տրակտոր» կոլտնտեսությունը գտնվում է շատ խիստ պայմաններում: Տարվա մեջ միայն 74 օր այնտեղ սառնամանիքներ չեն լինում, իսկ տեղումներ տարվա ընթացքում լինում է ընդամենը 200 մ.մ.: Ընդամենը 50 կիլոմետր է բաժանում այդ կոլտնտեսությունը յերկրագնդի ամենացուրտ տեղից: Յեվ այդ պայմաններում կոլտնտեսությունն արդեն չորս տարի իրար հետևից ստանում է հեկտարից 10 ցենտներից ավելի գարնանացան ցորենի բերք, իսկ 1938 թվին ստացել է 14,2 ցենտներ:

Զոլոտոպրուդնայի № 1 Բուդյոննովկի խորհտնտեսությունը ևս միշտական սառցապատման զոնայում ստանում է հեկտարից 180 ցենտներ կաղամբ, 150 ցենտներ գազար, 120 ցենտներ ճակնդեղ, 115 ցենտներ սոխ: Մոտակա տարիներում խորհտնտեսությունն իր այգիներից հավաքելու յե խնձոր, բալ, մորի և այլ հատապտուղներ:

Ծայր Հյուսիսում յերկրագործության զարգացման համար հսկայական նշանակություն ունեն Խիբինսկի բևեռային գյուղատնտեսական փորձակայանի նվաճումները, վորի ղեկավարն է—չքանաչանակիր-ակադեմիկ Ի.Գ. Նյխֆելդը: Կայանն ընտրել ու ստեղծել է բույսերի նոր ցրտադիմացկուն վաղահաս սորտեր, մշակել է հյուսիսային յերկրագործության ագրոտեխնիկան, վորի գործադրման հետևանքով կայանը հեկտարից ստանում է 307 ցենտներ գազար, 309 ցենտներ կարտոֆիլ, 466 ցենտներ կաղամբ և այլն:

Դրա հետ միասին լայն կերպով յերևան է գալիս կոլտնտեսականների նախաձեռնությունը, վորոնք նույնպես տվել են մի շարք նոր ագրոտեխնիկական յեղանակներ: Իր վրա ուշադրություն է հրավիրում գոմաղբի այսպես կոչված կարկասային նախապատրաստումը, վոր կիրառվում է Յակուտական ավտոնոմ մարզի կոլտնտեսություններում: Հյուսիսի դաժան կլիմայի պայմաններում դժվար է տնտեսություններում ստանալ լավ այրված գոմաղբ: Յակուտիայի կոլտնտեսականները կիրառում են լավ գոմաղբ պատրաստելու հետևյալ ձևը: 50 տոնն սառած գոմաղբ դարսում են հյուղակի մեջ, վորի ներսում դրված է ձիու գոմաղբի շերտ՝ 10—15 սանտիմետր հաստությամբ: Հյուղակում դարսում են փայտ, վորը վառում են և հյուղակը ծած-



կում ու թողնում մինչև գարուն. այդ ժամանակամիջոցում գոմաղբը լավ փտում է և հողը մտցնելիս խիստ բարձրացնում դաշտային կուլտուրաների բերքատվությունը:

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Պատմության մեջ առաջին անգամ Խորհրդային Միության մեջ է ստեղծվում մասսայական մաշտաբով ռացիոնալ յերկրագործություն, վորը խիստ տարբերվում է ցարական Ռուսաստանի հետամնաց և գիշատիչ յերկրագործությունից: Դրանով իսկ անսահման հնարավորություններ են բացված նաև գյուղատնտեսական գիտության զարգացման համար: Ցուցահանդեսում, լայն կերպով ցույց են տրված խորհրդային առաջավոր գյուղատնտեսական գիտության համարձակ նովատորների՝ Միչուրինի, Լիսենկոյի, Ցիցինի, Դերժավինի, Վիլյամսի և ուրիշ շատերի աշխատանքներն ու նվաճումները: Ցույց են տրված Ֆլորայի (բուսական աշխարհի) մեծ հեղափոխականի՝ Ի. Վ. Միչուրինի աշխատանքի մեթոդները, վորով նա ստեղծել է բույսերի հարյուրավոր նոր սորտեր ու տեսակներ: Ցույց են տրված գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ս. Ֆ. Ջերնենկոյի պտղատու նոր սորտերը: Ցույց են տրված սեզի և ցորենի յելակետային ձևերը, այդ բույսերի հիբրիդների մի շարք սերունդները և միամյա ու բազմամյա ցորենների կոնստանտ ձևերը, վորոնք ստացել է Ի. Վ. Ցիցինը: Ցուցադրված են ագրոնոմ Ա. Ի. Դերժավինի աշորա-ցորենային հիբրիդը և ագրոնոմ Շչիբրյայի ստացած հիբրիդը տոպինամբուրից ու արևածաղկից: Շատ հետաքրքիր են խաչաձևելու համար այն զույգերը, վոր առաջարկում է ակադեմիկ Ցիցինը.

Վոլոս— դեղին ակացիա
Սեզ— ցորեն
Սեզ— տարեկան
Վոլոսնեց— ցորեն
Վոլոսնեց— գարի
Բրոմուս— վարսակ
Շյուղախոտ— վարսակ
Տոպինամբուր— արևածաղիկ:

Այցելողը Ցուցահանդեսում տեսնելով Ցիցինի բազմամյա ցորենները, Ցուցահանդեսից հեռանում է, համոզվելով խորհըր-

գային գիտության անսահման հնարավորությունների վերաբերմամբ, համոզվելով, վոր շուտով, շատ շուտով բազմամյա ցորենները կծածկեն մեր անսահման դաշտերը, իսկ ակացիայի ճյուղերից կհավաքվեն վոլոռի (սիսեռ) առատ պտուղներ:

Ծանոթանալով ակադեմիկ Լիսենկոյի և նրա բազմաթիվ աշակերտների աշխատանքներին վերաբերող նյութերի հետ՝ Յուցահանդես այցելողը լրիվ պատկերացում է ստանում ԽՍՀՄ-ում ագրոբիոլոգիական գիտության զարգացման մասին, գյուղատնտեսական կուլտուրաների յարովիզացիայի մասին, ցորենի ներսորտային խաչաձևման, կարտոֆիլի ամառային տնկումների, բամբակի ծերատման և վեգետատիվ հիբրիդիզացիայի մասին: Պատվավոր տեղ են գրավում գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ա. Դ. Կիզյուրինի աշխատանքները, վոր պտղատու ծառեր աճեցնելու նոր մեթոդներ է կիրառել Սիբիրի խիստ կլիմայի պայմաններում: Շատ որինակելի յեն շքանշանակիր ակադեմիկ Ի. Վ. Ռուդնիցկու աշխատանքները, վորի անվան հետ են կապված նրա կողմից ստացված բրնձի, գարու, վարսակի, ձմերուկի, պամիդորի և վարունգի սորտերը, վորոնք լայնորեն ծանոթ են ամբողջ ԽՍՀՄ-ին: Ուշադրավ են ակադեմիկ Պրյանիշնիկովի աշխատանքները, վորն իրավամբ համարվում է խորհրդային ագրոքիմիական գիտության հիմնադիրը, վորի ղեկավարությամբ խորհրդային ագրոքիմիան առաջատար տեղ գրավեց համաշխարհային գիտության մեջ:

Ստալինյան եպոխայի գիտության լիարժեք ներկայացուցիչն է հանդիսանում վերջերս մեռած ակադեմիկ Վ. Ռ. Վիլյամսը՝ հողի վերաբերյալ գիտության և յերկրագործության բնագավառում խոշորագույն նովատորը, վորը հողի, բուսածածկույթի և նրանց փոխազդեցության զարգացման եվոլյուցիոն թեորիայի հիման վրա ստեղծեց յերկրագործության խոտադաշտային թեորիան, վորն այժմ լայն կերպով գործադրվում է սոցիալիստական յերկրագործության պրակտիկայում:

Հետաքրքիր են պրոֆ. Սուպրունենկոյի (Ուկրաինա) աշխատանքները. նա ստացել է տարեկանի նոր ձևեր, վորոնք մեկ հասկի վրա ունեն 250—350 հատիկ և հեկտարից տալիս են 80—100 ցենտներ հատիկի բերք:

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում ագրոնոմ Դերժավինի աշխատանքները, վորոնք վերաբերում են ցորենի բազմամյա սորտեր (աշորա-ցորենային հիբրիդներ), բազմամյա



տարեկանի, սորգոյի, վիկի և այլն սորտեր ստանալուն: Հանրածանոթ է գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ա. Ի. Շեխուրդինի անունը, վորը տվել է ներկայումս միլիոնավոր հեկտարներ գրավող ցորենների մի շարք հռչակավոր սորտեր (Լյուտեսցենս 062), գիտությունների դոկտոր Դ. Ա. Դոլգուշինի անունը, վորն ակադեմիկ Լիսենկոյի ղեկավարությամբ մշակել է ցորենի սորտերը ներսորտային խաչաձևման միջոցով լավացնելու յեղանակը:

Ուշադրավ են զոոտեխնիկական գիտության ներկայացուցիչները՝ ակադեմիկ Իվանովը, վորն ստացել է գյուղատնտեսական կենդանիների մի շարք նոր ցեղեր, ակադեմիկ Լիսկունը, վորի գրչին են պատկանում զոոտեխնիկայի բնագավառում յեղած գիտական ու հանրամատչելի աշխատություններից 450-ից ավելին, շքանշանակիր պրոֆեսոր Լեվիցկին, վորը մշակել է կերերը դրոժացման յենթարկելու մեթոդները, շքանշանակիր Միլովանովը, վորը կատարելագործել է գյուղատնտեսական կենդանիների արհեստական բեղմնավորման մեթոդները, և շատ ուրիշները:

Վոչ մի հնարավորություն չկա կանգ առնելու Խորհրդային գիտության այդ բազմաթիվ ներկայացուցիչների աշխատանքի մանրամասնությունների վրա: Այդպիսի բնութագրումը կպահանջեր գրել մի շարք ինքնուրույն աշխատություններ:

Ցորենա-սեզային հիբրիդները, վեգետատիվ հիբրիդիզացիայի աշխատանքները (Ֆիլիպովինը՝ կարտոֆիլի նկատմամբ, Բրուսենցովինը՝ կարտոֆիլի և տոմատի նկատմամբ, Լեբեդևայինը՝ բոստանաբույսերի նկատմամբ), անասունների նոր ցեղերը (ակադ. Իվանովի, զոոտեխնիկ Ֆիլյանսկու), Կիզյուրինի զետնատարած այգիները, Յուդինի մերկահատիկ գարիները, Ոսիպովի մերկահատիկ վարսակները, Դերժավինի բազմամյա հացահատիկները, յենթարևեռի համար բանջարեղենների սորտերը (ակադ. Եյխֆելդի), պտղատու ծառերի նոր սորտերը (Գորշկովի, Ջենենկոյի, Խուդյակովի, Լիսավենկոյի, Իվանիցկու, Տիխոնովի, Լուկաշևի, կոլտնտեսական Ֆյոդոր Գրինկոյի), Յարլոկովի ծառատեսակների նոր ձևերը, կանեփի միաժամանակ հասունացող սորտերը, Մուսիյկոյի աշխատանքները յեգիպտացորենն արհեստական սերմնավորման յենթարկելու շուրջը, խինայի ծառի կուլտուրան իրացնելուն վերաբերող աշխատանքները և այլն, և այլն.— այս բոլորը վառ ու ազդու կերպով ցույց են տալիս Յուցահանդեսի այցելուներին, թե ինչպես խորհր-

դային յերկրի մարդիկ՝ զինված աշխարհիս ամենաառաջավոր տեխնիկայով ու առաջավոր գիտությամբ, վերափոխում են բույսերի և կենդանիների բնույթը, ստեղծելով բնականից ավելի լավ նոր ձևեր:

## ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսը հանդիսանում է սոցիալիստական յերկրագործության հաղթանակների համաժողովրդական ստուգատեսը: Ցուցահանդեսը բացառիկ խոշոր դեր է խաղում գյուղատնտեսության հետագա վերելքի կազմակերպման և ստալինյան յերրորդ հնգամյակի խնդիրների կատարման գործում: Ցուցահանդեսի ամբողջ նշանակությունն ավելի լավ հասկանալու համար, պետք է ավելի պարզ պատկերացնել Ցուցահանդեսում յերևան հանված այն բոլոր հաջողությունների և նվաճումների անհամար բազմակերպությունը, վոր ձեռք են բերել գիտության ու պրակտիկայի նովատոր-առաջավորները:

Ցուցահանդեսում հավաքած տեսական և գործնական գյուտերըն ու նվաճումները և, այսպես կոչված՝ «մանր» բարելավումներն ու նորամուծումները, վորոնցից աճում ու կազմվում են առանձին տնտեսությունների և յերկրագործության ամբողջ ճյուղերի խոշորագույն հաջողությունները, հանդիսանում են խորհրդային բուսաբուծության, խորհրդային ագրոբիոլոգիական գիտության հաղթանակների ստուգատեսը: Յեվ այդ հաղթանակները մեկնակետ կդառնան բնության վերափոխման նոր ու նոր պրոբլեմների լուծման համար:

Ցուցահանդեսը նույնպիսի մեծ նշանակություն ստացավ նաև գյուղատնտեսության մեխանիզացիայի գիտության համար, մեխանիզացիայի նոր պրոբլեմներ լուծելու համար, բարձրացնելու համար այն առաջնակարգ մեքենայական պարկի ոգտագործման եֆեկտիվությունը, վորով կոլտնտեսություններին, ՄՏԿ-ներին ու խորհտնտեսություններին զինել է սոցիալիստական ինդուստրիան:

Թե՛ յերկրագործության քիմիզացիայի հարցերում, թե՛ կիրառական ենտոմո-և ֆիտոպատոլոգիայի հարցերում, զոոտեխնիկայի, անասնաբուծության, կերահայթայթման բոլոր ճյուղերում Ցուցահանդեսը առաջավորների նվաճումների ստուգատեսն է,— այդ մի հսկա պրակտիկ ու գիտական դպրոց է, վորտեղ



ժողովուրդն ե՛լ ավելի արագ է սովորում առաջ գնալ դեպի նոր հաղթանակներ:

Վոչ մի տեղ և յերբեք պատմության մեջ այդպես չի մեծարվել հողի աշխատավորների աշխատանքը, վոչ մի տեղ և յերբեք գյուղացու աշխատանքն այնպիսի փառքով չի պսակվել, ինչպես մեր սոցիալիստական յերկրում:

Ցուցահանդեսը մի գրավիչ և ոգտակար դպրոց է բազմամիլիոն այցելուների համար: Ցուցահանդեսն այցելողը, վորպես կանոն, արտադրության լավագույն աշխատողն է, մասսաների մեջ հեղինակավոր, մեծ կոլեկտիվի լիդոր: Վերադառնալով տուն, այդպիսի այցելուն դառնում է ագիտատոր և պրոպագանդիստ:

Կասկած չկա, վոր Ցուցահանդեսի մասնակիցները և այցելուներն առաջին հերթին կլինեն գյուղատնտեսության մեջ ամեն մի նոր և առաջավոր բան մտցնելու ակտիվ նախաձեռնողները, նրանք պիոներները կլինեն ավելի նոր, վիթխարի հաղթանակների, հաղթանակներ, վոր մեր յերկիրը, ազատ ու յերջանիկ սոցիալիստական յերկիրը, ամեն որ ձեռք է բերում բոլշևիկների կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, սիրելի Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի ղեկավարությամբ:

ИМ. А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

## ՈԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՏԿԱՊԵՍ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ


1. Всесоюзная Сельско-хозяйственная Выставка 1939 г. под редакцией П. Н. Поспелова, А. В. Гриценко, Н. В. Цицина. Москва 1939.
2. Опыт стахановцев сельского-хозяйства. Москва 1939.
3. Павильон Гидроэлектростанция. Путеводитель. Москва 1939.
4. Павильон Механизация. Путеводитель. Москва 1939.
5. Павильон Животноводство. Путеводитель. Москва 1939.
6. Павильон Зерно. Путеводитель. Москва 1939.
7. Павильон Армянская ССР. Путеводитель. 1939.
8. Павильон Агролесомелиорация. Путеводитель. 1939.
9. Павильон Поволжье. Путеводитель. 1939.
10. Павильон Картофель и Овощи. Путеводитель. Москва 1939.
11. Ильин В.—Ф.Стахановская агротехника культуры картофеля. Москва 1939.
12. Куколев Н. И.—Высокий урожай подсолнечника. Москва 1939.
13. Стахановцы—овощеводы открытого грунта. Москва 1939.
14. Морозов И. С.—Большая честь. Москва 1939.
15. Истомин М. И.—Передовики семеноводства люцерны. Ростов 1939.
16. Трошин И. и Иванов Е.—Пять лет Тушинского совхоза. Новосибирск 1939.


---

## Ց Ա Ն Կ

Եջ


*Ներածություն* . . . . . . . . . . 3
*ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության և գյուղատնտեսության ընդհանուր զարգացումը Ստալինյան հնգամյակների տարիներին* . . . 7
*Սոցիալիստական անասնապահության աճը* . . . . . . 10
*Անասնապահության կերի բազայի աճումն ու ամրապնդումը* . . . 11
*Կերի բազայի ռացիոնալ կազմակերպումն ու ոգտագործումը և խոտադաշտային ցանքաշրջանառությունները* . . . . . . 14
*Մարզագետինների արմատական և մակերեսային բարելավումը* . . 16
*Գյուղատնտեսության մեխանիզացիան ցուցահանդեսում* . . . . 19
*Աշխատանքի արտադրողականությունը* . . . . . . 24
*Ստախանովյան պայքար յերաշտի դեմ* . . . . . . 27
*Յեֆրեմովյան շարժումը և յեֆրեմովկաների աշխատանքի մեթոդները* 30
*Կերի կուլտուրաների ստախանովյան բերքը* . . . . . 38
*Գիտության առաջավորները Գյուղատնտեսության Ցուցահանդեսում* . 47
*Յեզրափակում* . . . . . . . . . 50
*Ոգտագործված գրականություն* . . . . . . . . 52

Թարգմանիչ՝
Կումկումաջյան
Լեզվական-խմբագիր՝
Հ. Հարությունյան
Տեխ-խմբագիր՝
Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝
Մ. Ցերգնկյան

ՎՖ—2604. Հրատ. 5260.
Պատվեր 413. Տիրաժ 3000.
Հանձնված է արտադրության 29/V—1940 թ.
Ստորագրված է տպագրութ. 30/IX—1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0295017

14820

Գինը 1 ռ. 50 կ.

Доктор биологических наук проф. А. К. МАГАКЬЯН

Достижения передовиков стахановцев на Всесоюзной Сельско-Хозяйственной Выставке 1939 г.

Армгиз, Ереван, 1940 г.